

9 - 10 (299-300)  
4.04.2012թ.  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուկուն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՐԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՆՔԻ ՎՐԱ՝ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Մարտի 18-ին աշխատանքային այցով Արցախում էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի զլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին նախարարության աշխատակազմի ղեկավար Սիեր Ղազարյանը, «Փյունիկ» հիմնադրամի նախագահ Լևոն Սարգսյանը, Հայաստանի պետական ազդարային համալսարանի ղեկավար Արշալույս Թարվերդյանը, ճարտարապետաշինարարական պետական համալսարանի ղեկավար Հովհաննես Թոքմաչյանը: ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանի ուղեկցությամբ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ մի շարք ուսումնական հաստատություններում: Արցախի կրթական գերատեսչության ղեկավարի խոսքով՝ 2010թ. ՀՀ և ԼՂՀ ԿԳ նախարարությունները որոշեցին են մի կարևոր խնդիր՝ Արցախի կրթությանը ապահովել տեղեկատվական համակարգերով: Եվ առաջին արձագանքեց ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը, որի

վական դասարաններ: Իսկ ԵՃՇԴՀ-ի բարեկամությունը դպրոցի հետ շուրջ յոթ տարի է: Ռեկտոր Հ. Թոքմաչյանի նախաձեռնությամբ այստեղ գործում է նկարչական լաբորատորիա: Նրա համոզմամբ՝ երեխան մինչև նկարել, գծագրել չիմանա՝ ճարտարապետ չի դառնա: Իսկ այս անգամ նա դասարանի համար բերել է համակարգիչ, պրոյեկտոր, էկրան: «Ուզում ենք, որ արցախցի երեխաներն օգտվեն տեխնիկական առաջընթացի նորություններից. սա ոչ թե շնորհակալության արժանանալու համար է, այլ մեր պարտքն է», - ասաց նա:

ԼՂՀ ԿԳ նախարարի տեղեկատվությամբ, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Լևոն Սարգսյանն անցած երկու տարիներին մեծ աջակցություն է ցուցաբերել Արցախի կրթական համակարգին՝ տրամադրելով քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության 73-ական և մասամբ աշխարհագրության լաբորատորիաներ, նաև դիդակտիկ պարագաներ, 300 գլոբուս և 40 համակարգիչ: Ծրագիրը շարունակվում է: Վ. Խաչատրյանի խոսքով՝ գործնական ծրագրերի շրջանակներում ակտիվ համագործակցություն է ծավալվում ՀՀ և ԼՂՀ ԿԳ-երի միջև: Այն կլինի շարունակական և այսօր էլ հավուր պատշաճի իրականացվում է:

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հանդիպումները Արցախի կրթական ոլորտի աշխատողների հետ դարձել են ավանդական: Նրանց հետ ընդլայնված հանդիպումներ տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի դահլիճում: Ներկա էին նախարարության պատասխանատու աշխատողները, շրջանների և Ստեփանակերտի կրթության բաժինների վարիչները, մայրաքաղաքի դպրոցների, արհեստագործական ուսումնարանների տնօրենները, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավար կազմը և գիտխորհրդի անդամները:

ՀՀ ԿԳ նախարարը ներկայացրեց համակարգի բարեփոխումները և դրանց ընթացքը:

### ԻՐԱՎԱՆՑՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐՆ ԱՅՆԵՏՐԱՆՔ ՉՈՒՄԵՆ

Ա. Աշոտյանի խոսքով՝ մեր երկու հանրապետությունների կրթական ոլորտների խնդիրները համահունչ են, մոտեցումները՝ նույնը, ընդհանուր քաղաքականությունը՝ համադրելի, որովհետև ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև ստեղծված հարաբերությունների շրջանակներում ձևավորվել է ընդհանուր հայկական կրթական տարածք: Ձանքերն ուղղված են միևնույն նպատակին: Հայաստանի օրինակով նախարարը փաստեց, որ կրթական ոլորտի բարեփոխումներն անցնում են ծանր քննադատությունների պայմաններում, բախվելով անհամաձայնությունների և սնանատիպ այլ երևույթների, որոնք խոչընդոտում են ոլորտի արագ զարգացմանը: «Ես վերջերս Հայաստանում հանդգնություն ունեցա ասելու, ասում են և այստեղ, իրականացվող բարեփոխումներն այլընտրանք չունեն: Երեք տարվա ընթացքում ես չեմ հանդիպել գեթ մեկ ընդդիմախոսի, գեթ մեկ քաղաքական ուժի ներկայացուցչի, գեթ մեկ մասնագետի, որը կարողանար մեկ ժամվա ընթացքում ինքն իրեն ապացուցել, որ իր դժգոհությունը ոչ թե տակտիկական է, այլ ռազմավարական: Հետևաբար, մեր բռնած ուղին իրականում ամխուսափելի է և ոչ միայն այն պատճառով, որ մենք ամենաբանախոսը և խելոք մարդիկ ենք, որ հայտնվել ենք այս աշխատանքում, այլև նրա համար, որ մենք ընդամենը փորձում ենք ճիշտ տեղայնացնել միջազգային լավագույն փորձը՝ պահպանելով կրթական ազգային ավանդույթները և դրանց վրա խարսխել արդիական կրթական համակարգի ստեղծումը: Ուրիշ հարց է, և այստեղ քննադատելու տեղ կա (որին պետք է հանգիստ վերաբերվել), որ իրականացման փուլում, այո, լինում են խնդիրներ, սխալներ, դրանք պետք է ընդունել և ժամանակին լուծել:

Նախարարի կարծիքով, քննադատության պատճառներից մեկն էլ այն է, որ հասարակությունը չափազանցված է անմիջապես տեսնել համակարգում կատարվող դրական փոփոխությունները: Բայց չէ՞ որ հնարավոր չէ կրթական ոլորտում հասնել կարճաժամկետ կայուն տեսանկյունի էֆեկտների, եթե, իհարկե, խոսքը վերաբերում է լուրջ աշխատանքին: «Իսկ եթե խոսքը պոպուլիզմի, փիարի մասին է, ապա կարելի է անել ամբողջ

խահաճ քայլեր, օրինակ, վերադառնալ 10-ամյա հանրակրթական դպրոցին: Վստահեցնում են, եթե նման բան հայտարարվի Հայաստանում, ծնողների ճնշող մեծամասնությունն ուղղակի կուրախանա, կողմնակից: Գոնե մի երկու օրով կրառնամ շատերի աչքի լույսը»,- համոզված է ՀՀ ԿԳ նախարարը: Բայց դա նա կործանարար է համարում, որովհետև սեփական



անմիջական միջամտությամբ Արցախի 10 դպրոցներում ներդրվեցին տեղեկատվական համակարգեր: Այցի ընթացքում հյուրերը ներկա գտնվեցին տեղեկատվական համակարգի օգնությամբ ուսումնական գործընթացի կազմակերպմանը ՀՊԱՀ-ի Արցախի մասնաճյուղում: Հողաշինարարություն մասնագիտությունից ընթանում էր ուղիղ ռեժիմով դասախոսություն, որը վարում էր մայր բուհի դասախոսը: Վ. Խաչատրյանի տեղեկացմամբ՝ կրթական հաստատությունները գերաբազ ինտերնետ կապով ապահովելու շնորհիվ հնարավոր է դարձել հեռավար ուսուցման կազմակերպումը:



Այսօր մասնաճյուղն ունի 1300-ից ավելի ուսանող, ինչը խոսում է այն մասին, որ այն կայանում է: Հաստատության ուսումնանյութական բազան հարստացավ ՀՀ ԿԳ նախարարի նվիրած համակարգիչներով, ուսումնական պարագաներով, գրքերով: Երկու հայկական պետությունների կրթական պատասխանատուների այցելության հաջորդ վայրը մայրաքաղաքի թիվ 8 ավագ դպրոցն էր: Այստեղ գործում են Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի նվիրատվությամբ համակարգչային և ՀՀ ԿԳ-ի կողմից ստեղծված տեղեկատվական



ժողովրդին սուտ ասելու և սխալ ճանապարհ առաջարկելու քայլ է: «12-ամյա կրթությունը հանրակրթական համակարգում այլընտրանք չունի: Խոսել այն մասին, թե 12-ամյա կրթությունը կայացել է, նույնքան վարժան է, որքան ասել, որ 12-ամյա կրթությունը տապալվել է»,- այս կարծիքին է նա, որովհետև ընդամենը անցյալ տարի սեպտեմբերին Հայաստանում և Արցախում ձևավորվեցին 12-րդ դասարաններ, որոնք դեռ չեն ավարտել: «Խոսել այն մասին, թե ունենք շատ լավ արդյունքներ, մենք չենք կարող, բայց ասել, որ տապալվել ենք, ավելի շուտ կասեի, որ հաջողվել ենք, քան տապալվել»: Իսկ ի՞նչ է արվել: Նախարարը թվարկեց հիմնական աշխատանքները. ստեղծվել են ուսումնական նոր ծրագրեր, նոր դասագրքեր, վերապատրաստվել հազարավոր ուսուցիչներ, այդ թվում՝ ԼՂՀ-ից: Անցած տարի խոստացել էին բեռնաթափել հանրակրթական ուսումնական ծրագրերը, և սկսեցին միջին դպրոցից: Վերջին ժամանակներս մի քանի տասնյակ ուսումնական ծրագրեր են հաստատվել՝ բեռնաթափված, լրամշակված, տարբեր առարկաների ու տարբեր դասարանների համար: Դրանք անցել են մասնագիտական հրապարակային խորք քննարկումների շրջան: «Ասել, թե մանկավարժները համակարծություն են ցուցաբերում՝ ճիշտ չէր լինի, որովհետև ես չեմ տեսել երեք մանկավարժի, որոնք իրար հետ իրար հետևից համաձայն լինեն հինգ հարցում: Բայց մեր մասնագիտական հանրույթը հավանության է արժանացրել ներկայացրած ծրագրերը»,- տեղեկացրեց նա:

Ա. Աշոտյանն անդրադարձավ նաև ոլորտի կառուցվածքային բարեփոխումների մի շատ կարևոր հատվածին: «Հանրակրթության մասին» օրենքը կյանքի կոչելով՝ Հայաստանում կազմակերպվեցին տնօրենների վերապատրաստման, հավաստագրերի հանձնման քննությունների: 1600 թեկնածու արդեն հանձնել է տնօրենի հավաստագրի համար քննությունը, որից 400-ը կտրվել են: Քննադատության է արժանացել այն հանգամանքը, որ քննություններ կազմակերպեցին և տնօրենների մեծ մասը վերընտրվեց: «Իսկ նպատակն այդ տնօրեններին չվերընտրել չէր, այլ նրանց կրթական ցենզը բարձրացնելը: Գիտելիքով զինված տնօրենն իրականում դպրոցի հաջողության գրավականն է»,- համոզմունք հայտնեց ՀՀ ԿԳ նախարարը:

### ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՄՆՈՒՄ Ե ԳԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ա. Աշոտյանն անդրադարձավ ցավոտ հարցերից մեկին՝ ավագ դպրոցին, որի շուրջ, ըստ նրա, կրթերը հագիվ են համարաբար:

Ավագ դպրոցի մասին շատ է խոսվել, նպատակների, գոյության իմաստի: Նախարարը կրկին շեշտեց, որ այդ ուղղությամբ ոչինչ չի փոխվել, և ավագ դպրոցի կայացումը մնում է գերակա խնդիր: Նրանց վրա ուղղում են հսկայական ֆինանսական միջոցներ, միջազգային աջակցություն՝ բովանդակային բարեփոխումների համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՀԵՆՔԻ ՎՐԱ՝ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1 «Մենք չենք վախենում անհաճ, դառը, այդ պահին տհաճ քննադատությունից և բարեփոխումներն անում ենք՝ անկախ այն բանից, թե ինչ կմտածեն այդ պահին մեր մասին: Որովհետև անցնում է մի քանի ամիս, և դրանց ճնշող մեծամասնությունը գալիս մեր կողքին կանգնում է: Այս երեք տարիների ընթացքում չի եղել գեթ մեկ խոստում, գեթ մեկ բարեփոխում, ծրագիր, որ նախարարությունն իր արմուկները լարած չիրակահանգի մինչև վերջ: Այլընտրանք չկա. կամ մենք գնում ենք այն ճանապարհով, որ ուզում ենք ազգային դպրոցի հենքի վրա կառուցել արդիական կրթական համակարգ, կամ մշտական փնտրությունների, քննադատության, ինքնախարազանման, կներք այս բառի համար, մի քիչ էլ մեռուկասեր՝ նեկրոֆիլիկ տրամադրության մեջ ընկնելով՝ սկսում ենք փնտրել բոլորին և քննադատել միայն՝ չտեսնելով, որ իրականում ունենք մեծ առաջընթաց: Դա ես չեմ ասում, դա ասում են այն բոլոր միջազգային փորձագետները, որոնք գալիս են Հայաստան և բարձր գնահատականներով հեռանում՝ Հայաստանի կրթական բարեփոխումների բռնած ուղին գնահատելով որպես ամենարդիական ճանապարհներից մեկը: Իրենց հաստատվող գեղեցկություն, որոնք տարեկան մեկ-երկու անգամ տպագրում են տարածաշրջանի և մնացած բոլոր երկրների մասին, ասում են, որ Հայաստանի բռնած ճանապարհը կրթության ոլորտում շատ ճիշտ է»:

Ավելի լավ իմանալով համակարգի թերությունները, բացթողումները, սխալները, չլուծված հարցերը, փորձում է լուծում գտնել՝ կարևորելով մասնագիտական հանրության, վաստակաշատ ուսուցիչների, տնօրենների, ծնողների, ինչու չէ, նաև աշակերտների կարծիքը (որոնց հետ առ ժամանակ առ ժամանակ հանդիպում է)՝ ապահովելով հետադարձ կապ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԵՐԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԻՐԵՆ

Անդրադարձ անելով մասնագիտական կրթության ոլորտում իրականացրած քայլերին՝ նախարարը շեշտեց, որ նախնական և միջին մասնագիտական ոլորտը՝ ուսումնարան, քոլեջ, երկար տարիներ մնալով խորթ գավակի կարգավիճակում՝ բուհի և դպրոցի արանքում, այսօր կարծես վերագտնում է իրեն, որովհետև աշխատաշուկայում ստեղծվում է ռեալ պահանջարկ այս ոլորտի մասնագետի համար, ինչն ակնհայտորեն չկա բարձրագույն ուսումնական հաստատությունների ավարտած շրջանավարտների պարագայում: 2012 թվականի պետական պատվերը ՀՀ կառավարությունն այդ դաշտում 50 տոկոսով ավելացրել է: Վերակառուցվել, վերագինվել, կահավորվել են բազմաթիվ քոլեջներ և ուսումնարաններ, վերապատրաստումներն ընթանում են ինտենսիվ: Նախարարն ուրախությամբ փաստեց, որ արդեն երկրորդ տարին է, անգամ մրցույթ կա քոլեջների և ուսումնարանների ընդունելությունում: Գերագույն խնդիրը, որ հարվածում է և՛ դպրոցին, և՛ քոլեջներին, ուսումնարանին, աշակերտական թվաքանակի նվազումն է, ինչը պայմանավորում է նաև ֆինանսական խնդիրներ. ուսուցիչների ավելցուկի, չպահանջված աշխատուժի խնդիր է առաջանում: Դրանք այնքան էլ կրթական խնդիրներ չեն, բայց կրթությունն իր վրա է վերցրել ժողովրդագրական այդ հարվածի առաջին ալիքի ուժգնությունը:

ԻՐԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուհական համակարգում կատարված աշխատանքները նույնպես Ա. Աշոտյանը արդյունավետ է համարում: Կան շատ լուսավոր կետեր, փայլուն հաջողություններ: Անցած տարի ինտենսիվ իրականացվեցին Բոլոնիայի գործընթացով պայմանավորված բարեփոխումները՝ որակի հսկողություն,

ուսանողների փոխադրման, ավարտական քննությունների նոր կարգեր: Սահմանվեց պետական ավարտական քննությունների նոր կարգ, համաձայն որի՝ քննությունները պետք է ձայնագրվեն, ուսանողն իրավունք ունի բողոքարկել, նա միանգամից չի հեռացվում: Եթե նա զինապարտ չէ, կարող է ունենալ մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտք, որը կարող է վերահանձնել հինգ տարվա մեջ: Դա արվել է ստվերոտ, ամառողջ, կազմակերպական անհարկի քաջըջուկից ձեռքազատվելու, ուսանողների իրավունքների պաշտպանության համակարգն ավելի իրատեսական լինելու համար, և որ բուհն էլ չկորցնի իր ուսանողներին: Այս համակարգը մեծ տարածում ունի եվրոպական երկրներում:

Իսկ վերջին լավ նորույթը որպես իրականացված բարեփոխումների գնահատական՝ Հայաստանը Եվրոպական կրթական տարածքում ճանաչել է. այս տարվա հունվար ամսին Հայաստանն ընտրվեց գալիք երեք տարիների Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքի կենտրոն. երևան է ստանձնելու Բոլոնիայի Քարտուղարությունը: Փոքրիկ Հայաստանը, որտեղ Բոլոնիայի մասին շատ հաճախ բացասաբար են արտահայտվում, վերջին մեկուկես տարվա կատարած աշխատանքի շնորհիվ կհամակարգի Եվրոպայի ողջ տարածքում բարձրագույն կրթական բարեփոխումների ընթացքը: Պատասխանատու կլինի դրանց կազմակերպման համար: 2015թ. 100 նախարար է գալու Եվրոպական, ասիական, ամերիկյան երկրներից Երևան՝ նախարարական զագաթնաժողովի, և սա չտեսնել՝ ուղղակի հնարավոր չէ:

Երեք տարի բոլոր նախարարների գիտակցության մեջ կլինի Հայաստանը, երկիր, որը կղեկավարի իրենց: Անշուշտ, սա Հայաստանի շահն է, նաև՝ Լեռնային Ղարաբաղի: Թեպետ ԼՂՀ-ն Բոլոնիայի երկրների անդամ չէ, բայց բարեփոխումներն այնքան համաժամանակյա են ընթանում, որ կհանգեցնեն քաղաքական հարցերի սահուն լուծման: Գումարած՝ կրթական պաշարները, որ դրվում են Ղարաբաղի կրթական համակարգի զարգացման և իրավունքի իրականացման գործում:

Իսկ որպես ամրագրված հաջողություն՝ Ա.Աշոտյանը նշեց շախմատը դպրոցում: Հայաստանում այն հսկայական դրական արձագանք է գտել ուսուցիչների, աշակերտների, ծնողների շրջանում: Երեխաների մոտ մեծ սեր կա դեպի այս խաղը, որովհետև այն տրամաբանության ուսուցման, ռազմավարական մտածելակերպ ձևավորելու լավագույն միջոցներից մեկն է: Դա նաև միջազգային մակարդակով է ճանաչում ստացել: Նախարարն այսպիսի դիտարկում արեց. Հայաստանի հիշատակումը միջազգային լրահոսում, որպես կանոն, ցեղասպանությունն է, հայ-թուրքական հարաբերությունները, իսկ վերջին շրջանում՝ շախմատը: Նրա վկայությամբ՝ չկա մի շաբաթ, որ արտասահմանյան որևէ հեղինակավոր լրատվամիջոցի ներկայացուցիչ չհամղիվի իրեն՝ շախմատի մասին նյութ պատրաստելու համար: Իսկ երբ ինքը լինում է Եվրոպայում, նախարարներն են հարցնում այդ մասին՝ ասելով, որ իրենց երկրի ինտելեկտուալները մատնացույց են անում Հայաստանի այդ քայլը շախմատի առումով: Արդյունքները կամփոփվեն ուսումնական տարին ավարտվելուց հետո, բայց նախարարն ակնկալում է դրական տեղաշարժ ոչ միայն երկիրը ներկայացնելու՝ փիարի տեսակետից, այլև ակադեմիական առաջադիմության առումով. շախմատը ձևավորում է մտածողություն, բնավորություն, և երեխայի դաստիարակության մեջ անփոխարինելի միջոց է, ինչն իր դրական հետևանքները կթողնի հետագայում մյուս ոլորտների և ընդհանուր առմամբ, մեր պետության առաջընթացի վրա:

Նախարարը որպես առաջադեմ քայլ վկայակոչեց նաև անցյալ տարի Հայաստանում բացված առաջին միջազգային դպրոցը: Այստեղ ևս մեծ քննադատություններ եղան իրենց հասցեին. ինչու՞ն է ասես չէին մեղադրում:

«Քվանտ» վարժարանի 11-րդ և 12-րդ մեկական դասարաններում AB համակարգով գործող ամենահեղինակավոր միջազգային դպրոցների այդ ցանցը, որը տարածաշրջանում հիմնադրվել է, մեծ իրարանցում առաջացրեց համակարգում: Դրա շնորհիվ ներմուծվեցին, թարգմանվեցին, տեղայնացվեցին դասագրքեր, ծրագրեր, մեթոդաբանություն, այսինքն՝ չպարփակվեցին խորհրդային կամ հետխորհրդային մտածելակերպի կամ ռուսական մանկավարժական դպրոցի մտածողության սահմաններում: «Մենք հնարավորինս շատ պատուհաններ ենք բացում դեպի արտաքին աշխարհ: Իհարկե, ամեն նոր քամի չէ, որ պետք է մեր տան մեջ տնավորվի, բայց այդ քամին իր հետ կարող է բերել մի դրական փոփոխություն, որ պետք է բռնել անպայման և տեղայնացնել», - այս համոզմանն է ՀՀ ԿԳ նախարարը:

ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հանդիպման մասնակիցները հարցեր ուղղեցին ՀՀ ԿԳ նախարարին: ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Ալավա Ասրյանի հարցերը բեռնաթափված հանրակրթական ուսումնական ծրագրերի և դասագրքերի, դրանց գործածության ժամկետի և միջին մասնագիտական ու արհեստագործական ուսումնական հաստատություններից բուհ անցման օրենսդրական փոփոխությունների առնչությամբ էին:

ՀՀ ԿԳ նախարարի պարզաբանմամբ՝ դրանք ոլորտում կատարված վերջին փոփոխություններն են: Ծրագրերը բեռնաթափվել են, սակայն ճիշտ նկատվեց, որ դասագրքերի փոփոխություններ դեռ չեն եղել, ինչը պայմանավորված է ֆինանսական խնդիրներով: Դեռ մաշվածությունը չսպացուցած, կյանքի ցիկը չսպառած դասագիրքը չպետք է հանել շրջանառությունից: Դասագրքերի կյանքի տևողությունը 4-5 տարի է: Բեռնաթափված ծրագրերով հին դասագրքերով անգամ (դասագիրքն ավելի համապարփակ է, քան ծրագիրը) հնարավոր է իրականացնել ուսումնական գործընթացը, ասել է թե՛ դասագիրք փոխելու հրամայական այս պահին չկա: Նոր մրցույթի դեպքում, բնականաբար, կիրառարակվի դասագիրք, որն ամբողջությամբ կհամապատասխանի ծրագրին: Դրանք դեռևս փորձարկման փուլում են և գործածության մեջ կդրվեն սեպտեմբերի 1-ից:

Մասնագիտական կրթության հետ կապված՝ տրվել հետևյալ պարզաբանումը: Քանի որ ավագ դպրոցները գտնվում են նախարարության ենթակայության տակ, գործում են ավելի մեծ վերահսկողության պայմաններում միջին մասնագիտական հաստատությունների համեմատությամբ (որոնք այլ ենթակայության են): Նման խստության պայմաններում ծնողների մի մասը գերադասում է իրենց երեխաներին ուղարկել քոլեջներ, որպեսզի դասերին չներկայանալով՝ պարապելու գնան կրկնուսուցիչների մոտ: Ծնողների ճնշող մեծամասնության մոտ դեռևս այն կարծրատիպը կա (չնայած դրանց թիվը պակասում է), թե երեխային անպայման պետք է տալ կրկնուսուցիչ՝ ձևավորելով նրա մեջ այն գիտակցությունը, որ իրեն պետք է միայն այն առարկաները, որոնցից պետք է քննություն հանձնի: Եվ թողարկվում է միակողմանի զարգացած սերունդ: Մինչդեռ նպատակը լիարժեք քաղաքացու դաստիարակումն է, որն ունի գիտելիքների պաշար բոլոր առարկաներից: Ավագ դպրոցը թույլ է տալիս, հատկապես վերջին դասարանում, շատ ավելի խորանալ նախընտրած առարկաների մեջ: Բացի այդ, քոլեջի շրջանավարտն ինչ-որ տեղ հայտնվել է արտոնյալ վիճակում՝ ավագ դպրոցի համեմատ, երբ առանց քննություն հանձնելու իրավունք է ստանում նստել բուհի 2-րդ կամ 3-րդ կուրսում: Նախարարի հավաստմամբ՝ նորմալ կրթական համակարգ ունեցող եվրոպական ոչ մի երկրում իրավունք չկա միանգամից քոլեջից գնալ բուհ: Եթե եկել է քոլեջ, նշանակում է՝

ուզում է ստանալ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկայում աշխատել որպես միջին օղակի մասնագետ: Իհարկե, նա հետագայում, մի քանի տարի աշխատելուց հետո, կարող է գնալ բուհ: Իսկ եթե քոլեջի շրջանավարտը միանգամից է բուհ գնում, ուրեմն խաբել է, երբ ընդունվել է քոլեջ: Ու որպեսզի այլևս չխաբեն (քանի որ այդ պատճառով տուժում են և՛ կրթական մակարդակը, և՛ ավագ դպրոցը, և՛ այդ երեխաները), նախարարը հետևյալ որոշման մասին բարձրաձայնեց՝ քոլեջից-բուհ այդ հեշտ անցումը վերացվում է: Այս տարի վերջին անգամ կթույլատրվի, որ քոլեջի շրջանավարտները նախկին ձևով (գերազանցիկությամբ կամ այլ կերպ) անցնեն բուհ: Մնացած շրջանավարտները քննությունները կհանձնեն միասնական համակարգով:

ԱրՊՀ պրոռեկտոր Վահրամ Բալայանի հարցը վերաբերում էր կրթության որակի բարձրացման ուղղությամբ կատարվող քայլերին:

ՀՀ ԿԳ նախարարը տեղեկացրեց, որ կատարվող քայլերից մեկը մասնավոր բուհերի թվի նվազումն է: Վերջին երեք տարում դրանց թիվը 70-ից հասել 34-ի: Օրենքում կատարվել են փոփոխություններ, հիմա նոր պայմաններ են, ընդունելությունը միասնական քննություններով է: Նորությունը, որ սպասվում է, այս է՝ առաջիկայում, հավանաբար 2014-2015 ուսումնական տարվանից, կսահմանվի ուսման վարձի նվազագույն մակարդակ: Եթե պետական չափորոշիչներով տվյալ մասնագիտությունը ստանալու համար պետությունը ծախսում է մի որոշակի գումար, մասնավոր բուհն ինչպե՞ս կարող է դրանից պակաս գումարով ապահովել նույն կրթությունը՝ նույն դիպլոմը տալով: Սա էլ կհանգեցնի այն բանին, որ դիպլոմի հետևից ընկնողների թիվը կպակասի:

ԱրՊՀ ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Կարեն Արամյանին հետաքրքրում էր, թե իրականացվող բարեփոխումները կհանգեցնե՞ն բարոյական բարձր հատկանիշներով օժտված հասարակության: «Անբարոյական մարդն, իհարկե, չարիք է, բայց կրկնակի չարիք է, երբ անբարոյական մարդը հայտնվում է դպրոցում: Դա չի նշանակում, իհարկե, թե նրանց թիվը մեծ է դպրոցում: Դա ընդամենը նշանակում է, որ հասարակության ախտերը ներթափանցում են նաև դպրոց: Մենք չունենք բարոյականության չափագրման գործիք, որպեսզի դպրոց ուսուցիչ ընդունելիս չափենք նրա բարոյականության աստիճանը՝ ով է պոտենցիալ կաշառակեր, ով՝ նվիրյալ: Հազարավոր մանկավարժներ կան, որոնց մեծ մասին մամուլը տեղյակ չէ, չնայած նրանց մեջ քիչ չեն վաստակաշատ ուսուցիչները: Բայց բավական է մեկն ինչ-որ վատ արարք թույլ տա՝ նրա մասին բոլորն իսկույն իմանում են մամուլից, համացանցից, ֆեյսբուքից: Անշուշտ, այստեղ մեծ դեր ունի մեր ազգին ներհատուկ ծայրահեղականությունը. մենք ավելի շատ կարծես տուրք ենք տալիս նեգատիվ լրահոսին, բացասական նորություններն ասես ավելի շատ են հրապուրում: Խնդիրը կրթության մեջ չէ, այլ հասարակության: Ես մեզանից պատասխանատուությունը չեմ հեռացնում: Կրթությունը, այո, ուսումնառություն է՝ գումարած դաստիարակություն: Որքանով է դաստիարակվածությունը պահանջված: Սա պետք է հասկանալ: Ղարաբաղն, իմ կարծիքով, ավելի բարձր է կամագնա՞ծ: Ես դա համոզված ասում եմ Երևանի բուհերում սովորող ուշիմ, աշխատասեր ուսանողների տեսակարար կշռից ելնելով:

Բայց այսօր վտանգավոր մի երևույթի ենք բախվում. հայտնվել է նոր խումբ, ինչպես արյան խմբերում՝ ուսյալ, բայց անբարոյական մարդը: Տգետ անբարոյականն այնքան վտանգավոր չէ, որքան՝ ուսյալ, բայց ազգային տեսակետից անբարո, ապագային մարդը: Հարցը պատասխան չունի: Ես էլ ձեզ հետ միասին ցավում եմ այդ երևույթի համար», - ասաց ՀՀ ԿԳ նախարարը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԼԻԱՆՈՒՅՍ ԵՄ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԿՂԱՌՆԱ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԵՆՏՐՈՆ

Ուսաստանի 4. Տիմիրյազկի անվան պետական ագրարային համալսարանի ղեկավար Կ. Քոչարյանը...



Ուսաստանի 4. Տիմիրյազկի անվան պետական ագրարային համալսարանի ղեկավար Կ. Քոչարյանը...

2012թ. հունիսի 4-ին Կ. Քոչարյանը Լուսինյանի 4-րդ համագործակցության համաժողովում...

Ավելացնենք, որ Ա. Թարվերդյանը Դարավերջի կայանում տարածաշրջանից միակ գիտնականն է...

Շնորհավորում ենք անվանի գիտնականին՝ մեծ հաջողության համար: Արշալույս Թարվերդյանը 33 498 պատվիրակության կազմում օրերս գտնվում էր Արցախում: Մեր հարցազրույցը:

- Պարոն Թարվերդյան, ըստ Ձեզ, ինչպե՞ս է կայանում մասնաճյուղը: - Ագրարային համալսարանի մասնաճյուղը ունենալը ես համարում եմ Արցախի ագրարային համակարգի համար ամենակարևոր քայլերից մեկը: Արցախի գյուղատնտեսությունը...

Նյութատեխնիկական բազան՝ մի խնդիր, սեփական կադրերը՝ երկրորդ գլխավոր խնդիրը, և երբ այդ ամենը կատարվի, տարիներ անց ամենայն հավանականությամբ ակամատես կլինենք Արցախի պետական ագրարային համալսարանի բացմանը: - Ի՞նչ հաճախակա՞նությամբ եք լինում մասնաճյուղում և տեսնո՞ւմ եք զարգացումը: - Հակառակն ավելի ճիշտ կլիներ ինչքան եմ լինում Երևանում: Շատ հաճախ: Երբ կարիք է լինում մասնաճյուղի տնօրենի, աշխատակիցների կամ մեր կողմից առաջացած ցանկացած հարց բնարկել, անհրաժեշտության դեպքում այցելում ենք մասնաճյուղ, շփվում, անգամ քննարկում ենք մասնաճյուղի գործունեության բոլոր կողմերին վերաբերող հարցերը՝ վարչական, կառավարման, կազմակերպական, ուսումնական գործընթացի կազմակերպման: Արցախի մասնաճյուղ այցելելն ինձ համար խիստ անհրաժեշտություն է դարձել: - Ագրարային կրթությունը իրենից ենթադրում է փորձառուցման մեծ շրջան: Ինչպե՞ս է կազմակերպվում: - Քիչ անց մենք կունենանք քննարկում: Մի քանի օր առաջ, երբ այստեղ էի, տնօրենի խորհրդի նիստում բարձրացվեցին հարցեր, որոնցից մեկն ուսումնափորձական տնտեսության ստեղծումն է՝ առնվազն 20 հա հողատարածքի վրա: Այսօր մենք հնարավորություն ունենք այդ հարցը բարձրացնելու և լուծում տալու: Ագրարային, գյուղատնտեսական կրթությունը իր բնույթով կիրառական է, և դժվար է պատկերացնել արդեն պատրաստի մասնագետ, որն ունի տեսական գիտելիքներ, բայց գործնական հմտությունները ձևավորված չեն: Դա պարզապես մեր ոլորտի թերի կողմը կլինի: Եվ այս պատճառով էլ մեր հիմնական ուշադրությունը հենց դրա վրա է: - Իսկ մինչև ստեղծվելն ինչպե՞ս է իրականացվում գործընթացը հիմա: - Կա փոքր ուսումնափորձական տնտեսություն և ամենակարևորը՝ կան մասնավոր ընկերություններ, ֆերմերային տնտեսություններ, որոնք հաճույքով ուսանողներին հնարավորություն են տալիս արտադրական փորձուսուցումն անցկացնել այստեղ: Բայց կան որոշ լաբորատորիաներ, որոնք մասնաճյուղում միանգամից ստեղծել հնարավոր չէ: Այդ պատճառով էլ որոշ առարկաների լաբորատոր պարապմունքները, ինչպես արդեն նշեցի, իրականացնում ենք Երևանում: Գյուղատնտեսական կրթությունը ենթադրում է նյութատեխնիկական լաբորատոր անհրաժեշտ բազա: Եվ երկու կամ երեք տարվա ընթացքում միանգամից ստեղծել այն ամբողջ լաբորատոր բազան, որն անհրաժեշտ է գյուղատնտեսական կրթություն տալու համար՝ դժվար է պատկերացնել: Բայց խնդիրն աստիճանաբար լուծվում է: - Գիտենք, որ մայր բուհը սերտորեն համագործակցում է արտերկրի բուհերի հետ, ինչքանո՞վ է դրանում ներգրավված Արցախը: - Մենք մաստիճանաբար մասնաճյուղի ուսանողներին մասնակից ենք դարձնում նաև մեր միջազգային համագործակցության ծրագրերին: Այսպես, բուլղոսի վերջերս Գերմանիայի Դաշնության գիտակրթական ծրագրին մասնաճյուղից ուսանողները մասնակցեցին: Ես վերջերս Տիմիրյազկի անվան ագրարային համալսարանում էի, մեծ հաճությամբ պայմանավորվեցինք: Նրանք կընդունեն նաև մեր մասնաճյուղի մասնագետներին: Նաև հնարավորություն ունենք ուսանողներ ներգրավելու ամերիկյան կրթական կարևոր ծրագրում, որով հետև ագրարային համալսարանում գործում է հայ-ամերիկյան ագրոբիզնեսի բարձրագույն դպրոցը: Ես շահագրգռված եմ, որ արցախցի մեր երիտասարդներն անպայման ընդգրկվեն կարևոր այդ ծրագրում, քանի որ այնտեղ կրթությունը, իրոք, բարձր մակարդակով է կազմակերպվում: - Նույնը վերաբերում է և դասախոսակա՞ն կազմին: - Բնականաբար: Դասախոսական կազմի վերապատրաստման հարցում, որ հնարավոր է իրականացնել ագրարային համալսարանում, որևէ խնդիր չի եղել և չի էլ կարող լինել, որովհետև մասնաճյուղի դասախոսը ագրարային համալսարանի դասախոս է:

Հարցազրույցը վարեց Ավերյանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ասեսավորում

ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՍԿՍՎԱԾ Է

Մարտի 17-26-ը անցկացվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Ստեփանավերտի հ. 2 հիմնական դպրոցը տասն օր շարունակ վերածվել էր մեծահասակների դպրոցի: Օրական ութ ժամ աշակերտական ցուցանիշները հասնում էին 900 ուսուցիչների 12 մասնագիտությունների գծով: Նրանք ուսուցիչների այն առաջին խումբն էին, որ ներկայացվել են վերապատրաստումների՝ աստեսավորման նպատակով: ԼՂՀ ԿԳ նախարարության հրավերով վերապատրաստման դասընթացները իրականացնում էին ՀՀ ԿԳԼ կրթության ազգային ինստիտուտի 39 մասնագետները: Դասընթացները համակարգող՝ ՀՀ ԿԳԼ մանկավարժական կադրերի աստեսավորման և վերապատրաստումների բաժնի մասնագետ Գրիգոր Առստամյանի տեղեկացմամբ, աստեսավորումն անցկացվում է պարզ ընթացակարգով՝ մեկ փուլով: Կարելի է այն երեք ենթափուլի բաժանել: Առաջին՝ երբ տնօրենները շրջանային հանձնաժողովին ներկայացնում են 20 տոկոսի չափով ուսուցիչներ: Երկրորդ ենթափուլը 80-ժամյա այս վերապատրաստումներն էին, իսկ երրորդ փուլը լինելու է հանրապետական հանձնաժողովի գործունեությունը: Շրջանային հանձնաժողովը երկու տիպի որոշում է կայացնում. տվյալ ուսուցիչը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում: Հանրապետական հանձնաժողովը դարձյալ երկու որոշում է կայացնում. տարակարգ շնորհել կամ չշնորհել: Այս ամբողջ գործընթացը կրկնվում է պարզ ընթացակարգ, այսինքն՝ փաստաթղթային աստեսավորում: Վերապատրաստված ուսուցիչները ստանում են վկայական, որն ուժի մեջ է վեց ամիս: Նա այդ վկայականի պատճենը հանձնում է շրջանային հանձնաժողովին: Հանրապետական հանձնաժողովը շնորհում է չորս տարակարգ աստեսավորման չորրորդն է: Յուրաքանչյուր տարակարգ ունի իր չափորոշիչը: Այսպես, չորրորդ տարակարգին հավակնողը պետք է ունենա առնվազն գիտությունների թեկնածուի աստիճան: Տարակարգ շնորհելիս հանձնաժողովը հաշվում է առնում ուսուցչի աշխատանքի արդյունքները, մասնավորապես հողվածները և այլն: Հինգ տարվա մեջ բոլոր ուսուցիչները, տարեկան նրանց 20 տոկոսը, պետք է աստեսավորվեն: Համակարգող մասնագետի գնահատմամբ՝ տնօրենները հիմնականում ճիշտ են ներկայացրել ուսուցիչներին, բացառությամբ մի քանի դեպքերի: Մեկ տարուց պակաս ստաժ ունեցող ուսուցիչը չի ներկայացվում աստեսավորման, նա պետք է ունենա առնվազն երեք տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ, որից վերջին մեկ տարին աշխատանք լինի տվյալ դպրոցում: Տարիքային առումով սահմանափակումներ չկան, բայց տրամաբանական այն է, որ նախաթռակային տարիքի ուսուցիչներին իմաստ չկա ուղարկել վերապատրաստումների. պետությունը փող է ծախսում տվյալ ուսուցչի վրա, և գերադասելի է, որ վերապատրաստվեն նրանք, ովքեր դեռ երկար կաշխատեն դպրոցում: Ուսուցիչների ընդհանուր մակարդակից վերապատրաստողները գոհ էին, մեզ հետ ունեցած գրույցում կարծիք հայտնելով՝ միաժամանակ նշեցին, որ առավելապես կաղում են օրենսդրությունից. անգամ իրենց տարրական իրավունքներին չեն տիրապետում: Մասնակիցների կարծիքները բարձր էին ստացած մեթոդական գիտելիքներից: «Ծանոթացանք ծրագրային փոփոխություններին, մեթոդներին, կարծում եմ, դրանք մեզ մեծ օգուտ կտան», - այս տեսակետին է Ձորավանի միջնակարգ դպրոցի տնօրեն, ֆիզիկայի մասնագետ Սլավիկ Արզումանյանը: «Ծանոթացանք ԽԻԿ մեթոդին, որը մեզ մոտ դեռ այնքան տարածված չէ, շատ տեղեկատվություն ստացանք: Այդպիսի մասնագիտական օժանդակություն մշտապես ունենալու դեպքում կհասնենք ավելի բարձր արդյունքների», - կարծում է աշխարհագրության քաղաքային մեթոդավորման նախագահ Լուսինե Մելքունյանը: «Դասընթացները շատ արդյունավետ են: Դպրոցում մի բան կփոխվի դեպի լավը: Վաղուց եմ սպասում աստեսավորմանը, որպեսզի մասնակցեմ և տարակարգ ստանամ», - ասաց Վանքի միջնակարգ դպրոցի քիմիայի ուսուցիչ Սեյրան Բաղդասարյանը:

Սեփ. լրատվություն



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏՔՆԱԶԱՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում մարտի 30-ին ամփոփվեցին 2011-2012 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի համրապետական փուլի արդյունքները:

Ներկա էին մրցանակակիր աշակերտները, նրանց ուսուցիչները:

Արդյունքների հանգամանակից վերլուծությամբ հանդես եկավ կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը:

Հրապարակվում են ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանները հանրապետական փուլում մրցանակային տեղեր գրաված և բարձր արդյունքների հասած մասնակիցներին պարգևատրելու մասին:

Մրցանակային առաջին, երկրորդ և երրորդ տեղեր գրաված մասնակիցներին շնորհվեցին ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից հիշատակված մրցանակային տեղեր գրաված և բարձր արդյունքների հասած մասնակիցներին պարգևատրելու մասին:

Մրցանակային առաջին, երկրորդ և երրորդ տեղեր գրաված մասնակիցներին շնորհվեցին ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից հիշատակված մրցանակային տեղեր գրաված և բարձր արդյունքների հասած մասնակիցներին պարգևատրելու մասին:

Պարգևատրվածներին շնորհավորանքի և շնորհակալության խոսք ուղղեց կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը: «Իբրև նախարար՝ սա ինձ համար ամենից կարևոր միջոցառումներից մեկն է: Այսօր դեմ-հանդիման հավաքված տեսնում են հանրապետության լավագույն աշակերտներին և նվիրյալ ուսուցիչներին: Սա ինձ համար հպարտանալու պահ է: Երջանկացա, հրճվանք ապրեցի, ուրախացա, որ ունենք մեզ երախտավոր ուսուցիչներ, ովքեր իրենց գիտելիքները կաթիլ-կաթիլ փոխանցում են աշակերտներին և ձևավորում մեր ապագա արժանավոր քաղաքացուն: Ուրախացա, որ ունենք

մեզ երեխաներ, որոնք ձեռք են բերել ծավալուն գիտելիքներ և կարողանում են ստեղծագործել, պրպտալ»,- ասաց նա:

Ապա դիմելով աշակերտներին՝ ասաց, որ այսօր ամենամեծ հայրենասիրական գործը նրանք են կատարում ուսման մեջ ունեցած առաջադիմությամբ, խոր և ծավալուն գիտելիքներ ձեռք բերելով: Եվ համոզմունք հայտնեց, որ ընդունվելով բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ այնտեղ էլ կսովորեն բարձր առաջադիմությամբ և կյանք մտնելով, կդառնան մեր լավագույն մասնագետները ու ամեն ինչ կանեն ժողովրդի կամքն արտահայտող քաղաքականությունն իրականացնելու համար: Իսկ ժողովրդի պահանջը հետևյալն է՝ շենացնել, հզորացնել մեր երկիրը:

«Համոզված սան՝ հիմա գիտելիքների դար է: Աշխարհը թևակոխել է ժամանակակից տեխնոլոգիաների դարաշրջան: Իսկ դրանք օգտագործելու համար պահանջվում են խորը և կայուն գիտելիքներ:

Հայաստանի վարչապետը մի այսպիսի



հայտարարություն է արել՝ մենք պետք է ունենանք գիտելիքառատ տնտեսություն: Սա նշանակում է, որ առաջնահերթությունը պետք է տանք գիտելիքներին, որ տնտեսության մեջ պետք է աշխատեն այն մարդիկ, ովքեր զինված են գիտելիքներով: Մեն ու միայն գիտելիքառատ տնտեսությունը կարող է աշխարհում լինել մրցունակ: Իսկ այն պետք է ստեղծի մեր սերունդը, և այսօր այդ հիմքերը դուք դնում եք: Մենք համոզվեցինք, որ դուք ունեք այդ գիտելիքները»,- ասաց նախարարը՝ միևնույն ժամանակ աշակերտներին հորդորելով ինք-

նահանգստացում չապրել գովեստի խոսքերից: Ընդհակառակը, աշխատել ավելի ջանասիրաբար, ցուցաբերել մեծ աշխատասիրություն, մեծացնել գիտելիքների ծավալը:

Վ. Խաչատրյանը հավաստիացրեց, որ մեզանք երեխաները միշտ կլինեն նախարարության ուշադրության կենտրոնում: Հոգ կտարվի նրանց ապագայի մասին, ճիշտ կուղղորդվեն, նրանց հետ աշխատանք կտարվի: «Լավ սովորող երեխաների համար բոլոր ճանապարհները բաց են»,- ասաց նա՝ տեղեկացնելով, որ պետական մեծ միջոցներ են հատկացված, որպեսզի ՀՀ պետական բուհերում, Հայաստանի ամերիկյան համալսարանում և արտերկրի առաջավոր ուսումնական հաստատություններում խելացի, տաղանդավոր երեխաներն ուսում ստանան: Նա վստահեցրեց, որ ժամանակակից տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ մենք կհասնենք 100%-անոց արդարության, և քննությունների ժամանակ աստիճանաբար կվերանա մարդկային գործոնը: Ամեն ինչ արվում է՝ անաչառ ընդունելություն կատարելու համար: Եվ գիտելիք ունեցող այդ հարցում խնդիրներ չի ունենա:

Նախարարն ուսուցիչների ուշադրությունը սևեռեց հետևյալ հանգամանքին. ավագ դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 105 աշակերտ, որը կազմում է մասնակիցների ընդհանուր թվի 34%-ը, և նրանք բաժին է հասել մրցանակային տեղերի 45%-ը: Այստեղ մտցված չեն թիվ 3 միջնակարգ դպրոցի և ֆիզմաթի (որը նույնպես հոսքային է) մրցանակային տեղերը: Եթե նրանց մրցանակային տեղերն էլ ավելացվեն, ապա «այս ամբիոնից այսօր պիտի հայտարարեի, որ մրցանակային տեղերի ավելի քան 60%-ը բաժին է հասել հոսքային դպրոցներին»: Սա վկայում է, որ ավագ դպրոց կայանում է, որ նրա ճանապարհը ճիշտ է ընտրված, և այս ճանապարհով էլ պիտի շա-



րունակները ընթանալ:

Եվս մի քանի տվյալներ: Եթե 2010թ. համրապետական փուլին օլիմպիադայի ընդհանուր մասնակիցների 27,7%-ն էր մրցանակառու, ապա այս տարի 315 աշակերտներից մրցանակային տեղեր շահել են 137-ը, որը կազմում է 43%: Ու նաև բարձրացել է միջին միավորի շեղումը: Նախարարը մեկ այլ դիտարկում էլ արեց. լավագույն արդյունքներ ցուցաբերած այդ 137-ից հրավիրվել են 49 հոգի՝ որպես մրցանակակիրներ: Սնացած մասն աճնաճ միավորներով զիջում է մրցանակակիրներին և արժանացել է գովասանագրերի: Նրանք էլ ունեն բազային գիտելիքներ: Եվ այս տեսակետով աշխատելու դեպքում մրցանակակիրների թիվը հաջորդ տարի ավելի մեծ կլինի:

Վ. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց նաև ուսուցիչներին, ովքեր տարիներ շարունակ նվիրված ու տքնաջան աշխատանքով գիտելիքներ են սերմանել աշակերտների մեջ՝ հասնելով ցանկալի արդյունքների, կերտելով հուսալի ապագա:

Նախարարի ուշադրությունից դուրս չմնացին նաև օլիմպիադայի կազմակերպողներն ու անցկացնողները: Նա երախտագիտություն հայտնեց օլիմպիադայի կազմակերպիչին (Մախաբա՝ փոխնախարար Ս. Ասրյան), նախարարության աշխատողներին, մայրաքաղաքի հ. 1 հիմնական դպրոցի (որտեղ անցկացվել է օլիմպիադան) տնօրինությանը՝ Ռ. Դադայանի գլխավորությամբ, օլիմպիադան հաջողությամբ անցկացնելու համար:

Սեֆ. Լրավարություն

ԼՂՀ ԴՊՐՈՑԱՎԱՆՆԵՐԻ 2011-2012 ՈՒՍԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱԿԱՅԵՐԻ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արդեն ավանդական դարձած՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նպատակը եղել է մնում է վերահսկել և արժևորել այսօրվա դպրոցականի ազատ և համակողմանի զարգացման առաջնությունը, աշխատասիրությունը և պատասխանատվությունը՝ պահպանելով նրանց հավասար հնարավորությունները, ապահովելով թափանցիկությունը և անաչառությունը: Օլիմպիադաների հիմնական սկզբունքներից է նաև ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնությունը:

Օլիմպիադայի նպատակն է տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալու նպատակով, ինչպես նաև ստեղծագործ ուսուցիչների ներգրավումը շնորհալի երեխաների հայտնաբերման և ուսուցման գործում:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի համրապետական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով յուրաքանչյուր տարի ստեղծվում են համրապետական կազմկոմիտե և առարկայական հանձնաժողովներ, որոնց անվանական կազմը նախարարի հաստատման և ներկայացման կրթության և գիտության վարչությունը: Կազմկոմիտեն մշակում է օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների իրականացման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասսայականության ապահովման մեխանիզմները:

Սահմանում են կազմկոմիտեի անդամների և առարկայական հանձնաժողովների գործունեության սկզբունքները, նրանց պարտականություններն ու իրավունքները, ինչպես նաև մշակում օլիմպիադաների անցկացման ժամանակացույցը, սահմանում քվոտաների (սահմանված թվաքանակի) տրա-

մադրման կարգը: Օլիմպիադայի ավարտից հետո քննարկում և վերլուծում է արդյունքները, խրախուսման և ներկայացման առավել բարձր արդյունքներ ցուցաբերած մասնակիցներին և նրանց դասավանդող ուսուցիչներին:

Հանրապետական կազմկոմիտեն օլիմպիադայի համրապետական փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած հաղթողներից, դարձյալ ըստ քվոտաների, նախարարի հաստատման և ներկայացման եզրափակիչ փուլին մասնակցելու համար երաշխավորված դպրոցականների անվանակազմը:

Հիմք ընդունելով այս ամենը և ելնելով ՀՀ կրթության և գիտության նախարարի փետրվարի 15-ի N122/ԱՔ հրամանից, ղեկավարվելով «ԼՂՀ հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով «Դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգի» պահանջները, ինչպես նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. փետրվարի 23-ի N18/Ս հրամանը՝ փետրվարի 25-ից մարտի 13-ը ընկած ժամանակահատվածում անց է կացվել ԼՂՀ դպրոցականների 2011-2012 ուստարվա առարկայական օլիմպիադայի համրապետական փուլը՝ Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան, Ստեփանակերտի թիվ 1 հիմնական դպրոցում՝ 11 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու (անգլերեն), պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա), յուրաքանչյուր առարկայի հատկացվելով առանձին օր: Երջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել թիվ 315 դպրոցականների՝ անցած ուսումնական տարվա 263-ի փոխարեն: Ինչպես տեսնում ենք, ընդհանուր մասնակիցների քանակն անհամեմատ աճել է:

Մասնակիցների քանակն ըստ շրջանների

	2009-2010	2010-2011	2011-2012
Բ.Ստեփանակերտի Առևտրի շրջանից	77 մասնակից	82 մասնակից	85 մասնակից
Առևտրի շրջանից	28	24	40
Մարտակերտի շրջանից	25	37	41
Մարտուտի շրջանից	27	41	55
Հարությունի շրջանից	15	29	36
Շուշիի շրջանից	11	17	17
Շահումյանի շրջանից	5	12	15
Քաղաքապետարանի շրջանից	15	21	28
ԸՆԹԱՄԱՐ	203	263	315

Մասնակիցների քանակն ըստ առարկաների

	2009-2010	2010-2011	2011-2012
Հայոց լեզու առարկայից	45	58	82
Հայ գրականությունից	18	24	25
Ռուսաց լեզվից	37	36	39
Անգլերեն լեզվից	22	33	31
Պատմությունից	15	27	34
Աշխարհագրությունից	19	22	27
Մաթեմատիկայից	19	24	21
Ֆիզիկայից	4	5	4
Քիմիայից	11	12	16
Կենսաբանությունից	20	18	27
Ինֆորմատիկայից	1	4	7
ԸՆԹԱՄԱՐ	203	263	315

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակի առումով հայոց լեզու (58/83), քիմիա (12/18), ինֆորմատիկա (4/7) և կենսաբանություն (19/27) առարկաներից նկատելի աճ կա:

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ՝ ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչների մասնակցությամբ:

Գրավոր աշխատանքների ստուգումը բոլոր առարկանե-



ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

5 -աշխարհագրություն առարկայի 27 մասնակիցներից- 15 աշակերտ

-ինֆորմատիկա առարկայի 7 մասնակիցներից - 5 աշակերտ
- օտար լեզու առարկայի 31 մասնակիցներից - բոլորը հաղթահարեցին դրական շեմը

- քիմիա առարկայի 18 մասնակիցներից - դրական շեմը հաղթահարել են 4 աշակերտ:

Այսինքն, դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 315 մասնակիցներից 95-ի գրավոր աշխատանքները (30%-ը) առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից գնահատվել են անբավարար (8 մավորից ցածր):

Այժմ ուզում են կանգ առնել հանրապետության տարածքում գործող 3 ավագ և 5 հոսքային դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտների մասնակցության հարցի վրա՝ քանակական տեսանկյունից:

Table with 10 columns: Դպրոց, Ի. լեզու, Կ. գրակ., Ռուսաց լեզու, Օտար լեզու, Կատոմ., մաթեմատիկա, քիմիա, կենսաբան, ֆիզիկա, աշխարհ., ինֆորմ., Ընդամենը

Իսկ դրական առումով պատկերն այսպես է. հայոց լեզու առարկայից 6 մրցանակային տեղերից 5-ը բաժին հասավ ավագ և հոսքային դպրոցների աշակերտներին:

Հայ գրականություն առարկայից 6 մրցանակային տեղերից՝ 2-ը:

Ռուսաց լեզու առարկայից 5 մրցանակային տեղերից՝ 1-ը: Օտար լեզու առարկայից 7 մրցանակային տեղերից՝ 7-ը: Մաթեմատիկա առարկայից 4 մրցանակային տեղերից՝ - Ֆիզիկա առարկայից 3 մրցանակային տեղերից - Պատմություն առարկայից 8 մրցանակային տեղերից՝ 3-ը: Քիմիա առարկայից 3 մրցանակային տեղերից՝ 1-ը:

Կենսաբանություն առարկայից 3 մրցանակային տեղերից՝ 1-ը: Աշխարհագրություն առարկայից 3 մրցանակային տեղերից՝ 1-ը:

Ինֆորմատիկա առարկայից 2 մրցանակային տեղերից՝ -

Այսպիսով, դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի վերլուծության ընթացքում 315 մասնակիցներից 75-ը (24%) 8-9-րդ դասարանների, իսկ 240-ը (76%)՝ 10-12-րդ դասարանների աշակերտներ են, վերջիններից 105-ը (44%) հոսքային կամ ավագ դպրոցների սաներ են, ովքեր կազմում են օլիմպիադայի ընդհանուր մասնակիցների (33.5) տոկոսը: Իսկ մրցանակային 49 տեղերից 22-ը (45%) բաժին հասան հանրապետության տարածքում գործող 3 ավագ և 5 հոսքային դպրոցներին:

Ավագ և հոսքային դպրոցների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար պարզատրվածների քանակը

Table with 3 columns: № հ, Ըրջանը, Առարկան

Այս առումով 1-ին տեղում է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցը, 2-րդ տեղում է Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցը, 3-րդ տեղում են Մարտակերտի և Մարտունու հոսքային դպրոցները:

Այս տարի ևս օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլն անցկացվեց 3 օր, իսկ հանրապետական փուլում յուրաքանչյուր առարկայի հատկացվեց առանձին օր, ինչը հնարավորություն տվեց աշակերտներին իրենց գիտելիքները ցուցադրելու 2 և ավելի առարկաներից ու այդ առումով տարբեր շրջանների 35 աշակերտներ մասնակցել են երկու և ավել

լի առարկաների մրցույթին, որից 7-ը մեկ առարկայից գրավել է մրցանակային տեղ, մեկ այլ առարկայից՝ արժանացել գովասանագրի, իսկ 5 աշակերտ (4-ը՝ Ստեփանակերտ քաղաքի դպրոցներից, 1-ը՝ Ասկերանի շրջանից) 2 տարբեր առարկաներից գրավել են մրցանակային տեղեր: Նրանք են.

- Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արթուր Ղուլյանը անգլերեն լեզու և պատմություն առարկաներից գրավեց 2-րդ և 3-րդ տեղեր:

- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը հայոց լեզու և գրականություն առարկաներից գրավեց 2-րդ և 3-րդ տեղեր:

- Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 12-րդ դասարանի աշակերտուհի Մերի Զաքարյանը ռուսաց լեզու և ֆիզիկա առարկաներից գրավեց 2-րդ և 3-րդ տեղեր:

- Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Արմինե Հայրապետյանը աշխարհագրություն և հայ գրականություն առարկաներից գրավեց 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

- Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 12-րդ դասարանի աշակերտուհի Շահանե Մուսայեյանը 3-րդ մրցանակային տեղեր գրավեց ֆիզիկա և քիմիա առարկաներից:

Ընդհանրապես բոլոր 5 աշակերտներին և շնորհակալություն հայտնենք նրանց՝ լավագույն արդյունքի հասնելու համար:

Կանգ առնենք ոչ պակաս կարևոր, և կարծում են, մեզ բոլորիս ուրախացնող, մեկ այլ փաստի վրա: Մրցանակային տեղերի բաշխումից հետո արժանագրվեց, որ հանրակրթական դպրոցների 8 ուսուցիչների 2-ական աշակերտներ մրցանակային տեղեր են գրավել տարբեր առարկաներից: Այսպես.



- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմենուհի Խանունյանի 3 սաներից մեկը հայոց լեզու առարկայից գրավեց 2-րդ մրցանակային տեղ, 2-ը հայոց լեզու և հայ գրականություն առարկաներից գրավեցին մրցանակային 3-րդ տեղեր, իսկ 1 աշակերտ ակտիվ մասնակցության համար արժանացավ գովասանագրի:

- Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Ջոյա Մարտիրոսյանի աշակերտներից մեկը գրավեց 2-րդ, մյուսը՝ 3-րդ մրցանակային տեղեր, իսկ 2 աշակերտ ակտիվ մասնակցության համար արժանացան գովասանագրերի:

- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյանի երկու սաները գրավել են մրցանակային 1-ին տեղեր:

- Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի Էլինա Ապրեսյանի երկու սաները գրավեցին մրցանակային 2-րդ տեղեր:

- Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի Ռայա Մուսայեյանի երկու սաները գրավեցին մրցանակային 3-րդ տեղեր, իսկ 1 աշակերտ ակտիվ մասնակցության համար արժանացավ գովասանագրի:

- Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի տնօրեն, մաթեմատիկայի ուսուցչուհի Սուսաննա Ներսիսյանի երկու աշակերտները գրավեցին մեկը՝ 2-րդ և մյուսը՝ 3-րդ մրցանակային տեղեր:

- Նույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Նելլի Օհանյանի 2 սաները նույնպես գրավեցին 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

- Նույն դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Աշոտ Ապրեսյանի 2 սաները նույնպես գրավեցին 3-րդ մրցանակային տեղեր:

Բացի ավագ և հոսքային դպրոցներից, հարկ է նշել նաև այն դպրոցների անունները, որոնք յուրաքանչյուր տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացնում են ուսուցիչների հույսերը: Դրանք են.



Ստեփանակերտի հ. 2 հիմն., հ. 3 միջն. և Ֆիզմաթ դպրոցները

Ասկերանի շրջանի Նորագյուղի և Խնապատի միջնակարգ դպրոցները

Մարտակերտի շրջանի Հաթերքի, Չափարի և Վաղուհասի միջնակարգ դպրոցները

Մարտունու շրջանի Բերդաշենի և Հերիերի միջնակարգ դպրոցները

Հաղուրթի շրջանի Մեծ Թաղերի և Ազոխի միջնակարգ դպրոցները

Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական դպրոցը

Շահունյանի շրջանի Ակնաբերդի միջնակարգ դպրոցը

Քաջաթաղի շրջանի Գետամեջի և Աղածորի միջնակարգ դպրոցները

Ուրախությամբ նշեն նաև այն մասին, որ մրցանակային տեղեր գրաված ուսուցիչների շարքում հերթական անգամ հանդիպում ենք Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի ուսուցչուհիներ Հասմիկ Սեյրանյանի, Արմենուհի Խանունյանի, Գեղամուշ Գյազունցի, Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ջոյա Մարտիրոսյանի, Կարինե Աբաջանյանի, Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցի ուսուցչուհի Անահիտ Հակոբյանի, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսուցիչներ Նելլի Օհանյանի, Աշոտ Ապրեսյանի, Ասկերանի շրջանի Խաչատրյանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Աննա Ջիվանշիրյանի, Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Սիլվա Ենգիբարյանի, Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Սուրայա Ղազարյանի, Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի, Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Էլմիրա Գաբրիելյանի, Մարտունու շրջանի Հերիերի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Արմենուհի Գրիգորյանի անուններին և համոզված են, որ դեռ էլի կհանդիպենք:

Վերլուծության ընթացքում ակնհայտ դարձավ ևս մեկ ուրախալի փաստ, որ ընթացիկ ուսումնական տարվա օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթողների մեջ կրկին հանդիպում ենք մախորդ տարիներից մեկը մրցանակային տեղերից: Նրանք են Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի աշակերտներ Արթուր Ղուլյանը և Տաթև Ասրյանը, Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանը, Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցից՝ Շահանե Մուսայեյանը, Մերի Զախարյանը, Սերգեյ Կուրդյաշովը, Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի աշակերտ Տիգրան Վարդանովը, Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցից՝ Արմինե Հայրապետյանը, Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի աշակերտուհի Անուշ Հարությունյանը: Ահա այն աշակերտները, ովքեր առանձնացան ոչ միայն մրցանակային տեղեր գրավելու, այլ նաև այն առումով, որ նրանցից 6-ը, ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես իրավունք ստացան մասնակցելու օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելով, հանրապետական հանձնաժողովի կազմկոմիտեի որոշմամբ 11 առարկաներից լավագույն արդյունք ցուցաբերած 41 աշակերտների իրավունք տրվեց մասնակցելու նաև Հայաստանի Հանրապետությունում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին կայանալիք օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Հաջողություններ մաղթենք մեր բոլոր մասնակիցներին և սպասենք նրանց լավագույն ակնկալիքներով:

Կրկին շնորհավորում և շնորհակալություն են հայտնում բոլոր հաղթողներին ու նրանց հաջողությունների մեջ մեծ ավանդ ունեցող ուսուցիչներին:

Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Էլմիրա Գաբրիելյանի, Մարտունու շրջանի Հերիերի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Արմենուհի Գրիգորյանի անուններին և համոզված են, որ դեռ էլի կհանդիպենք:

Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյանի երկու սաները գրավել են մրցանակային 1-ին տեղեր:

Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի Էլինա Ապրեսյանի երկու սաները գրավեցին մրցանակային 2-րդ տեղեր:

Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի Ռայա Մուսայեյանի երկու սաները գրավեցին մրցանակային 3-րդ տեղեր, իսկ 1 աշակերտ ակտիվ մասնակցության համար արժանացավ գովասանագրի:

Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի տնօրեն, մաթեմատիկայի ուսուցչուհի Սուսաննա Ներսիսյանի երկու աշակերտները գրավեցին մեկը՝ 2-րդ և մյուսը՝ 3-րդ մրցանակային տեղեր:

Նույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Նելլի Օհանյանի 2 սաները նույնպես գրավեցին 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

Նույն դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Աշոտ Ապրեսյանի 2 սաները նույնպես գրավեցին 3-րդ մրցանակային տեղեր:

Բացի ավագ և հոսքային դպրոցներից, հարկ է նշել նաև այն դպրոցների անունները, որոնք յուրաքանչյուր տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացնում են ուսուցիչների հույսերը: Դրանք են.





ԴԻՍՈՐԴ-2012

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Կառավարության
«28» մարտի 2012 թվականի
N167-Ն որոշման

Ձ Ա Ն Կ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՏՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՄԲ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՄԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՆԱՍԱՐԱՆ

1.1. ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՆԱՍԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՂ

2.1 ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 4 columns: Համարակարգ, Առանձնագրային համար, Պետության կողմից բաժնետիրական ընկերության կողմից բաժնետիրական ընկերության կողմից (անվճար) ստեղծվել, Բաժնետիրական ընկերության կողմից (վճարովի) ստեղծվել

Table with 4 columns: Համարակարգ, Առանձնագրային համար, Պետության կողմից բաժնետիրական ընկերության կողմից (անվճար) ստեղծվել, Բաժնետիրական ընկերության կողմից (վճարովի) ստեղծվել

1.2 ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

2.2 ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 3 columns: Համարակարգ, Առանձնագրային համար, Բաժնետիրական ընկերության կողմից (վճարովի) ստեղծվել

Table with 3 columns: Համարակարգ, Առանձնագրային համար, Բաժնետիրական ընկերության կողմից (վճարովի) ստեղծվել



ԴԻՍՈՐԴ-2012

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՅՈՒՄ)

Table with 5 columns: Ծածկաթիվ, Առարկաներ, Կրթական մակարդակ, Կրթության տեսակ, Կրթության տեսակ. Rows include subjects like 'Մաթեմատիկա' and 'Ֆիզիկա'.

2.4 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՅՈՒՄ)

Table with 4 columns: Ծածկաթիվ, Առարկաներ, Կրթական մակարդակ, Կրթության տեսակ. Rows include subjects like 'Մաթեմատիկա' and 'Ֆիզիկա'.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար անփոփոխ ատեստավորման քննություններին մասնակցելու նպատակով

սույն թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը /ներառյալ/ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում կազմակերպվում է փաստաթղթերի ընդունելություն:

Ցանկացողները դիմում հայտի հետ միասին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) և ներդիրի (միջուկի) բնօրինակները՝ պատճենների հետ միասին

բ) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, ԼՂՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը՝ պատճենի հետ միասին,

գ) 2 լուսանկար (3X4սմ չափսի),

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր /բացի շաբաթ և կիրակի օրվանից/ ժամը 10 -00-16-00, ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, մասնագիտական կրթության և գիտության բաժին /14 սենյակ/:

Տեղեկությունների համար զանգահարել 04794-11-39:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության
«28» մարտի 2012 թվականի
N169-Ն որոշման

ՅԱՆԿ
ԱՐՅԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՍԱՐԱՆԻ 2012-2013 ՌԻՍՈՒՄԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ՍՄԴԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍՈՒՅՄԱՆ
ՏԵՂԵՐԻ

Table with 5 columns: №, Համարակց, Առարկաներ, Անվանում, Կրթական մակարդակ. Rows list subjects like 'Մաթեմատիկա' and 'Ֆիզիկա'.

ՌՈՒԴԻԿ ԶԱԼԱԼԻ ԱՂԱԲԵԿՅԱՆ



Ա Ր Գ Վ Ի Կ
պետական համալսարանը ծանր կորուստ կրեց. 67 տարեկանում կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժ-գիտնական Ռուդիկ Զալալի Աղաբեկյանը:

Ծնվել է 1944թ. դեկտեմբերի 10-ին, ԼՂ Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Միջնակարգ ավարտելուց հետո ուսումը շարունակել է Եռլի մանկավարժական ուսումնարանում, Լեռնգործի բարձրագույն ռազմական դպրոցում, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցում:

2000թ. Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Ապագա ուսուցչի անձը որպես մանկավարժական գործունեության սուբյեկտի ձևավորում բուհում» թե-

մայով և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ունի դոցենտի գիտական կոչում: Սկսած 1968-ից՝ աշխատել է որպես կոմերիտմիության Ստեփանակերտի քաղկոմի հրահանգիչ, պիոներ տան տնօրեն, «Գիտելիք» ընկերության պատասխանատու քարտուղար, ԼՂ մարզկոմի քաղլուստան կոնսուլտանտ, վարչի տեղակալ, վարիչ, մարզկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ տեղակալ: Վերջին տարիներին հանդիսանում էր ԼՂ կոմկուսի Կենտկոմի քարտուղարը:

1991 թվականից աշխատել է ԱրՊՀ-ում՝ նախ որպես փորձնախումբի բաժնի վարիչ, դեպի պաշտոնակատար, ապա՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

Ռուդիկ Աղաբեկյանը հեղինակ է բազմաթիվ գիտական, գիտամեթոդական աշխատանքների: Նա ԱրՊՀ արհիվոմիտի նախագահն էր:

Ազնիվ ու նվիրյալ արցախցու, սիրված մանկավարժի, գիտնականի և քաղաքացու պայծառ անունը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ԱրՊՀ ռեկտորապ

ԴԻՄՈՐԴ-2012

Հավելված N2  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության  
«28» մարտի 2012 թվականի  
N169-Ն որոշման

Ճ Ա Ն Կ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈՒՆԴԱՏՈՒՅՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՍԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Table with 4 columns: N, Համարակցային կոդեր, Անվանում, Կատեգորիա. Rows include various educational institutions like 'Մաթեմատիկա' and 'Ֆիզիկա'.

Table with 4 columns: N, Անվանում, Կատեգորիա, Կատեգորիա. Rows include 'Կառավարում', 'Ֆինանսեր', 'Հաշվապահական կառավարում'.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՂ

Table with 4 columns: N, Համարակցային կոդեր, Անվանում, Կատեգորիա. Rows include 'Ազգային (այն պարզիկի մասնաճյուղերից)', 'Անասնաբուծություն'.

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության  
«28» մարտի 2012 թվականի  
N 170-Ն որոշման

Ճ Ա Ն Կ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈՒՆԴԱՏՈՒՅՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՍԲ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՍԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ԲԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒԵՉ

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈՒԵՉ

Table with 5 columns: Համարակցային կոդեր, Անվանում, Կատեգորիա, Կատեգորիա. Rows include 'Մանկապարտեզները', 'Պարզաբանություն'.

Table with 4 columns: Համարակցային կոդեր, Անվանում, Կատեգորիա, Կատեգորիա. Rows include 'Գաղթյալները կառավարման արժիտակառուցման արդյունքում', 'Երկրաբանություն'.

ԴԻՍՈՐԴ-2012

**3. ՀՈՒՇԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԲՈՒՆԶ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՅՈՒՄ)**

**6. ՍՏԺԱՆԱԿԵՐՏԻ ԱՐԶԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆ**

Ծածկագիրը	Սամախարայուն	Պատահական տրամադրանքներ և անհատական գործընթացներ	Քաղաքական անհատական գործընթացներ
		Ինչ կարգի կարգի	Ինչ կարգի կարգի
0312	Պատահական տրամադրանքներ	6	14
0507	Պատահական տրամադրանքներ	6	14
0515	Քաղաքական կրթություն և ժողովրդական անվտանգություն	6	14
0518	Մարդկային զարգացման և ժողովրդական կրթություն	6	14
2014	Քաղաքական կրթություն և անվտանգություն	6	14
2307	Քաղաքական կրթություն	5	15
	Պատահական տրամադրանքներ	5	
<b>ԸՄՍԱԽԱԸ</b>		<b>40</b>	<b>85</b>

Ծածկագիրը	Սամախարայուն	Ավանդակներ		Վարդիակներ	
		Ինչ կարգի	Քաղաքական կարգի	Ինչ կարգի	Քաղաքական կարգի
0515	Քաղաքական կրթություն	20	-	-	-
0605	Քաղաքական կրթություն և անվտանգություն	-	-	-	20
0608	Անվտանգություն (լուսավորություն)	-	-	-	20
1002	Քաղաքական կրթություն և անվտանգություն	-	-	-	20
1207	Քաղաքական կրթություն	-	-	-	20
2003	Քաղաքական կրթություն	-	20	-	-
2004	Քաղաքական կրթություն և կրթություն	-	-	-	25
2002	Քաղաքական կրթություն	-	-	-	20
2004	Քաղաքական կրթություն և կրթություն	20	-	-	25
2001	Քաղաքական կրթություն և կրթություն (լուսավորություն)	20	-	-	25
2004	Քաղաքական կրթություն	-	-	-	20
2311	Քաղաքական կրթություն	20	-	-	25
2009	Քաղաքական կրթություն	-	-	-	25
2901	Քաղաքական կրթություն և կրթություն	-	-	-	20
2902	Քաղաքական կրթություն և կրթություն (լուսավորություն)	20	-	-	20
2905	Քաղաքական կրթություն և կրթություն (լուսավորություն, կրթություն, կրթություն)	-	-	-	20
2906	Քաղաքական կրթություն և կրթություն	-	-	-	20
2907	Քաղաքական կրթություն և կրթություն	-	-	-	20
2908	Քաղաքական կրթություն և կրթություն (լուսավորություն, կրթություն, կրթություն)	20	-	-	-
<b>ԸՄՍԱԽԱԸ</b>		<b>120</b>	<b>20</b>	<b>-</b>	<b>305</b>

**4. ՀՈՒՇԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԲՈՒՆԶ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՅՈՒՄ)**

**7. ՍԱՐՏՈՒՆՈՒ ԱՐԶԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆ**

Ծածկագիրը	Սամախարայուն	Վարդիակներ (Քաղաքական կարգի)
0312	Պատահական տրամադրանքներ	25
0517	Քաղաքական կրթություն	25
0601	Քաղաքական կրթություն և կրթություն	25
<b>ԸՄՍԱԽԱԸ</b>		<b>75</b>

**5. ՍՏԺԱՆԱԿԵՐՏԻ ԴՊԱՐԱՎԵՍՏԻ ԲՈՒՆԶ**

Ծածկագիրը	Սամախարայուն	Ավանդակներ և կրթություն
1207	Քաղաքական կրթություն	20
2303	Քաղաքական կրթություն	20
2311	Քաղաքական կրթություն	20
2001	Քաղաքական կրթություն և կրթություն	20
2905	Քաղաքական կրթություն և կրթություն (լուսավորություն, կրթություն, կրթություն)	20
<b>ԸՄՍԱԽԱԸ</b>		<b>100</b>

Ծածկագիրը	Սամախարայուն	Ավանդակներ և կրթություն
0506	Քաղաքական կրթություն և կրթություն	20
	Քաղաքական կրթություն	8
	Քաղաքական կրթություն	12
<b>ԸՄՍԱԽԱԸ</b>		<b>20</b>

ՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՕՐԵՐ

ԱՐՑԱԽՅԻՆ ԳԻՏԻ ԱՆԿԵՂՑ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ

ԲԱՑՈՒՄԸ

Մարտի 26-30-ը Արցախի հանրակրթական դպրոցներում անցկացվեցին Ռուսական խոսքի օրեր: Ռուսաց լեզվի և ռուսական պոեզիայի տոնը Արցախում դարձել է ավանդական: Հատկանշական է, որ այս տարի Ռուսական խոսքի օրերը մեկնարկեցին Արցախի մայր բուհում, որտեղ երկար տարիներ գործում է ռուսաց լեզվի մասնագետների պատրաստման ամբիոն, իսկ անցյալ տարի նույն այս միջոցառման շրջանակներում այստեղ բացվեց Ռուսական մշակույթի բարեկամների կենտրոն և ակտիվորեն գործում է:

Ռուսական խոսքի օրերի բացմանը ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, մտավորականության ներկայացուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, հյուրեր Հայաստանից և Ռուսաստանից:

Ռուսական խոսքի օրերի կապակցությամբ ուղերձ է հղել ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը, որում մասնավորապես ասված է. «Հայաստանի, Արցախի և Ռուսաստանի միջև ավանդաբար ձևավորվել են բարիդրացիական հարաբերություններ: Մեր փոխհարաբերություններն ունեն պատմական արմատներ: Առանձնապես վերջին տարիներին հայ-ռուսական հարաբերությունները զարգանում են դրական ուղղություններով: Եվ մենք մտադիր ենք առաջիկայում ևս ամրապնդել ու խորացնել մեր կապերը: Առաջնահերթ խնդիրն այն է, որ զեղեցիկ

ժեշտ ուշադրություն է դարձվում նաև մյուս լեզուների ուսուցմանը: Դրանց զարգացումը տեղի չունեցավ մեկը մյուսի փոխարեն, և այդ շարքում ռուսերենի նկատմամբ հատուկ վերաբերմունքը Աժ խոսակերտ համարում է ճիշտ: Արժևորելով ռուսերենի դերը՝ նա ասաց, որ խորհրդային տարիներին ռուսերենը Արցախի համար նաև փրկություն է եղել, որովհետև այդ դժվարին ժամանակաշրջանում ռուսերեն էին փորձում մեր ցանկությունները ներկայացնել աշխարհին: Մեր հանրապետությունում ռուսաց լեզվի ուսումնասիրումը, ռուսա-



կան մշակույթի և պատմության նկատմամբ վերաբերմունքն ավանդական բարձր մակարդակի վրա է: Եվ ուրախալի է, որ կրթության և գիտության նախարարությունը ոչ միայն պահպանում է այդ ավանդույթը, այլև զարգացնում է այն: Դրանում, անշուշտ, մեծ է ռուսաց լեզու դասավանդողների դերը:

Միջոցառման նախաձեռնող և կազմակերպիչ, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովն իր ելույթում ասաց, որ Ռուսական խոսքի օրերի անցկացումը ևս մի խորհրդանիշ է հայ և ռուս ժողովուրդների դավաճող բարեկամության և հոգևոր հարազատության:

Միջոցառման մասին գնահատանքի խոսք ասաց ՀՀ ԿԳՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Լիլյա Բալասանյանը:

ՕՐ ԱՌԱՋԻՆ. ԱՍՏՈՒՔՈՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՅՑ

Ռուսական խոսքի օրերի շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ մայրաքաղաքում և շրջաններում, որոնց ներկա էին Ռուսաստանից և Հայաստանից ժամանած հյուրեր՝ Նիժնի Նովոգորոդից բանաստեղծ Վիկտոր Կոնոպլովը, ՀՀ-ում ռուսագիր գրողների միջազգային ներկայացուցիչ Ելենա Շուվաևան, ՀՀ կրթության և գիտության նախարարության ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, հանրապետության ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների ասոցիացիայի նա-



խագահ Լիլյա Բալասանյանը, Երևանի «Հայ կրթություն» դպրոցի ուսուցիչ Մելանյա Գեղամյանը, Արցախի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց ուղեկցում էր ԼՂՀ ԿԳ ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովը:

Առաջին օրը՝ բացումից անմիջապես հետո, ԱրՊՀ-ում տեղի ունեցավ ասուներոզների մրցույթ՝ մայրաքաղաքի միջնակարգ և ավագ ու շրջկենտրոնների դպրոցների աշակերտների մասնակցությամբ: Ծրագրում ընդգրկված էին բանաստեղծություններ ռուսական պոեզիայի արձագանք դարից, փոքրիկ էսսե՝ «Ես Ռուսաստանի մասին պետք է խոսեմ» թեմայով, առակ: Ինչպես և անցյալ տարի, այս անգամ էլ դպրոցները ներկայացնում էին չորս

հոգուց (այդ թվում՝ վարողը) բաղկացած թիմ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր մրցույթի պահանջներից մեկը: Պետք է ի հայտ բերվեին շնորհալի, դերասանական վարպետությամբ, հեղինակի գեղարվեստական մտահղացումն արտահայտիչ ներկայացնելու կարողությամբ օժտված շնորհալի ասուներ: Բոլոր թիմերի կատարումներն էլ ինքնատիպ էին. կարողացան գրագետ ռուսերենով, ներշնչանքով մատուցել ռուսական դասական գրականության ըմտիք էջերից, հյուսիս ներկայացնել մեծն Պուշկինի լեզուն:

Այնուամենայնիվ, դա մրցույթ էր, և թիմերը պետք է գնահատվեին: Մրցատյանի որոշմամբ տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. առաջին տեղ՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց, երկրորդ տեղ՝ հ. 8, հ. 11 ավագ և ֆիզմաթ դպրոցներ, երրորդ տեղ՝ Զ. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան, Ասկերանի, Բերձորի, Մարտակերտի թիմեր: Նրանք պարգևատրվեցին ԼՂՀ ԿԳՆ համապատասխան կարգի դիպլոմներով և մրցանակներով, իսկ բոլոր մասնակիցները Հայաստանում Ռուսահամագործակցության ներկայացուցչության կողմից՝ գրքերով:



ՕՐ ԵՐԿՐՈՐԴ. ՄԵՁՈՂՎԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՎ ԱՄՐՏՈՒՄՈՒՄ

Ռուսական խոսքի երկրորդ օրը Մարտունում էր, որտեղ կազմակերպվեց շրջանի ռուսաց լեզվի ուսուցիչների մեթոդական խորհրդաժողով: Նախքան միջոցառումն սկսելը հյուրերը հարգանքի տուրք մատուցեցին Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի հիշատակին:

Խորհրդաժողովը բաղկացած էր մի քանի փուլերից, որի սկիզբը շրջվարչակազմի միտերի դախիժում էր: Այն ողջույնի խոսքով բացեց շրջվարչակազմի կողմից բաժնի վարիչ Գեորգի Սևիկյանը՝ շնորհակալության խոսք ուղղելով միջոցառման նախաձեռնող՝ ԼՂՀ ԿԳՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովին, որի մտահղացմամբ մնա միջոցառումները բարելավում են ռուսաց լեզվի դրվածքը շրջանում: Իր հերթին ելույթ ունենալով՝ Ռ. Օսիպովը ներկայացրեց ԼՂՀ ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանի ուղերձը Ռուսական խոսքի օրերի կապակցությամբ: Նա բարձր գնահատեց ուսուցիչների ներդրումը մայրենի գուգահեռ ռուսերենի պահպանման ուղղությամբ: Արդեն յոթերորդ անգամ անցկացվող մեթոդական խորհրդաժողովը, գլխավոր մասնագետի գնահատմամբ, դարձել է հանրապետության ռուսաց լեզվի ուսուցիչների հետ տարվող աշխատանքի գլխավոր ձեռքբերումներից մեկը: Դրա նպատակն է նրանց ծանոթացնել առաջավոր փորձին, նպաստել ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացմանը: Ուսուցչի վարպետությունը մեծ չափով կախված է ինչպես իր, այնպես էլ գործընկերների դասերը վերլուծելու կարողությունից, և եթե յուրաքանչյուր ուսուցիչ այդպիսի վերլուծություն կատարի, կլինի հաջորդ դասին նախապատասխանելու լավագույն սկիզբ, կարծում է ռուսաց լեզվի հանրապետության գլխավոր առարկայագետը:

Մասնակիցները լսեցին զեկուցում՝ «Ռուսաց լեզվի ժամանակակից դասի կառուցվածքային տարրերը և դրանց զարգացման հնարավորությունները» թեմայով, որով հանդես եկավ ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ղոցեմտ, մանկավարժական գիտու-

թյունների թեկնածու Ինգա Հակոբյանը: Այնուհետև մասնակիցները, խմբերի բաժանված, միաժամանակյա դասեր լսեցին հինգ դասարաններում՝ շրջկենտրոնի թիվ 2 հիմնական դպրոցում ինչպես տեղի, այնպես էլ թիվ 1 հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցի աշակերտների և ուսուցիչների կազմի ընդգրկմամբ: Բաց դաս ցուցադրող ուսուցիչներին նախապես ամրացված էին ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսները, որոնք համապատասխան աշխատանք են տարել ուսուցիչների հետ:

Յուրաքանչյուր խմբում դասախոսներին հետո տեղի ունեցավ դասերի վերլուծություն, այնուհետև՝ դրանց շնորհանդեսային ներկայացում, իսկ վերջում՝ ընդհանուր քննարկումների և սեմինարի ամփոփում:

Մասնագետների գնահատականները բարձր էին լսած դասերից. ռուսաց լեզվի ուսուցիչներն իրենց բարձրության վրա են: Առանձնահատուկ շեշտվեց այն հանգամանքը, որ դասավանդող ուսուցիչները հիմնականում հայկական դպրոցի շրջանավարտներ են: Ներկաներին դուր եկան թեմայի մատուցման ուսուցիչների՝ մեկը մյուսին չկրկնող ձևերը, ինչի մասին վկայում են հետևյալ կարծիքները:

ԴՈՆԱՐԱ ԳԱՐՐԻԵՅԱՆ, ՄԵՏՐՈՎ ՄԱՅՆՈՎ ԽԱՄԱԿԱՐԱՆԻ ՆԵԿՆՈՐ.

- Հերթական անգամ համոզվեցինք, որ Ղարաբաղում ռուսաց լեզվի ուսուցիչներն իրենց բարձրության վրա են: Երեխաների՝ լեզվին հիանալի տիրապետումը, ուսուցիչների հոյակապ դասավանդումը, ինչ դասարաններում էլ որ եղանք, գոհացրին հանձնաժողովի անդամներին: Եվ դասավանդման մեթոդիկան, և՛ դասի կազմակերպումը, թեմայի անբռնազբոս դասավանդումը ևս են առաջացնում երեխաների մեջ ռուսաց լեզվի և գրականության հանդեպ: Դա՛ այն դեպքում, երբ դասագրքերն այնքան էլ հաջող չեն: ՀՀ ԿԳՆ մասնագետի կարծիքով՝ ժամանակակից պահանջների համահունչ, մատչելի, հրապարակի վրա երած ամենալավ դասագրքերը չեն երեխաներին հասել: Դա լուրջ հարց է, և պետք է մտածել: Եվ ամենագլխավորն ինձ համար՝ որպես բուհի ղեկավարի, այն է, որ ես պայմանավորվածություն ձեռք բերեցի հաջորդ ուսումնական տարի մեր Խամախարանի հենքի վրա անցկացնել ռուսաց լեզվի դասավանդման վարպետության դասեր: Դա և՛ դասավանդման ժամանակակից մեթոդներն են, և՛ սեմնորային գրատախտակը, որը վաղն անպայման կլինի բոլոր դպրոցներում: Մի քանի տարի է՝ ես լինում եմ Ռուբեն Օսիպովի կազմակերպած միջոցառումներին: Կեցցե, բարձր մակարդակով են անցկացվում: Դրանք, անկասկած, նպաստում են առարկայի դրվածքի բարելավմանը: Շատ հարցեր բարձրացվեցին ուսուցիչների կողմից, որոնք պատասխան էին պահանջում, և շատերը ստացան: Ուսուցիչները գիտեն, որ գնում են ճիշտ ուղիով: Ընդհանրապես, մնան հանդիպումներն ու քննարկումները կարևոր են ցանկացած ուսուցչի համար: Իսկ երբ Ստեփանակերտից ու Երևանից ու ավելի հեռու վայրերից են մասնագետներ գալիս շրջան, արդեն նշանակալի իրադարձություն է:

ՄԵԼԱՆՅԱ ԱՐԳՈՒՄԱՆՅԱՆ, ԱՐՊՀ ՌՈՍԱՍ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՂՈՑԵՄՏ.

- Նման միջոցառումների անցկացմանը նախորդել են մեր հանդիպումները ուսուցիչների հետ: Դա այսօր մենք համոզվեցինք, որ ի գուր չեն անցել: Ուսուցիչներն իրենց դասերին կիրառում են այն մեթոդներն ու հնարները, որ առաջարկել էինք մենք ինտերակտիվ ուսուցման համար: Իններորդ դասարանում ցուցադրվեց միակ լեզվի դասը պարապմունքների այս ամբողջ շարքում (Օսիպյան Կարինե, հ. 2 դպրոց): Թեման բարդ էր և միևնույն ժամանակ, հետաքրքիր: Ուսուցչուհին կարողացավ գրական նյութը վարպետորեն կապել լեզվական նյութի հետ՝ զուգորդելով հայրենասիրությունը. օգտագործեց Ավոյի նկարը, նրա խոսքերը:

ՆԱԽՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱՎԱԳ ԴԱՍԱԽՏՈՒ, ՌՈՍԱՍ ԼԵԶՎԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՄԵՂԱԿԱԼ.



մթնոլորտ պահպանենք մեր երեք պետությունների միջև և շարունակենք զարգացնել մեր եղբայրական ժողովուրդների ավանդույթները»:

Բացմանը ողջույնի խոսք ասաց ԱրՊՀ նեկտոր Ստեփան Դադայանը: Կարևորելով միջոցառման նշանակությունը՝ նա շեշտեց, որ արցախցիների հետաքրքրությունը ռուսաց լեզվի նկատմամբ ոչ միայն ռուսական մշակույթի ճանաչման հանգամանքով է պայմանավորված՝ որպես հաղորդակցության միջոց, այլև հզոր գեներ է, որի օգնությամբ մենք բարեկամություն ենք հաստատել ռուս մեծ ժողովրդի հետ: Ռուս մեծ գրող Տուրգենևի խոսքերը, թե ռուսաց լեզուն գանձ է, մեծ արժեք, արդիական են նաև հիմա, ավելին՝ ռուսաց լեզվի իմացությունը հենարան է, որ կտակել են մեր նախնիները: Անցել է ավելի քան քսան տարի, ինչ անկախ ենք, և ինչպես իրեն հարգող յուրաքանչյուր երկրում՝ մեզ մոտ էլ գործում է «Լեզվի մասին» օրենքը, որով պետականորեն պաշտպանվում է մայրենի լեզուն, բայց դա չի նշանակում, թե սահմանափակվել է ռուսաց լեզվի ուսուցումը: Այն առաջվա պես պահանջված է, որպես պարտադիր առարկա մտցված է դպրոցական և բուհական ծրագրերում: Մատաղ սերունդն ազատ հաղորդակցվում է ռուսերենով, ինչն արդյունք է առարկայի դասավանդման բարձր դրվածքի՝ շնորհիվ նվիրյալ ուսուցիչների, որոնց պատրաստման դարբնոցն Արցախի մայր բուհն է, հպարտությամբ նշեց նեկտորը:

Ռուսական խոսքի օրերի անցկացման առթիվ իր ողջույնը հղեց ԼՂՀ Աժ նախագահ Ա. Ղուլյանը: Արդեն 20 տարի է, որպես ազգային-ազատագրական պայքարի կարևոր արդյունք, մեր կրթական համակարգում հատուկ ուշադրություն է դարձվում մայրենի լեզվի դասավանդմանը, բայց դրան զուգահեռ, անհրա-



ՈՒՄԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՕՐԵՐ

- Դասը 11-րդ դասարանում էր, եմնա Բաբայանի մոտ (հ. 1 դպրոց): «Նոնաքարե ապարանջան» թեման սկսեց՝ փորձելով մեկնաբանել սերը, և հաճելի է, որ հինգեցին Լեռնոստովի, Պուշկինի՝ սիրո մասին գեղեցիկ բանաստեղծությունները: Դրանց կողքին հաճելի անակնկալ էր Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծությունը, և որ ինձ ամենից շատ զարմացրեց, սիրո մասին աշակերտուհու մեջբերումն էր Նոր Կտակարանից: Դաս-գրույց էր, դասընթացում, որի ժամանակ երեխաները փորձում էին պրոբլեմային հարցեր լուծել: Նրանք կատարեցին բոլոր առաջադրանքները, ուսուցչուհին նրանց տարավ գրական շատ ճանապարհներով, կապեց մյուս առարկաների՝ հայ գրականության, պատմության հետ, ընդգծեց պատմական ժամանակաշրջանը: Եվ ինչն էր նաև ուրախալիկ. դա ոչ միայն ցուցադրական դաս էր, այլև տեսանք, որ արդյունք է նրա երկար տարիների տրամադրանքն աշխատանքի:

**Ճաննա Անաստասյան, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ.**  
- Դասի թեման էր՝ «Երկու ճշմարտություն, երկու ճակատագիր» Գոգոլի «Տարաս Բուլ-

գրականության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու.

- Մատաղ սերնդի ուսուցումն ու դաստիարակությունը դժվար և պատասխանատու գործ է: Դա կրկնապատկվում է, երբ խոսքը վերաբերում է կրտսեր տարիքի դպրոցականներին, քանի որ շատ կարևոր է հենց ուսուցման առաջին փուլում հետաքրքրություն առաջացնել երեխաների մեջ ուսման նկատմամբ, սեր՝ ռուսաց լեզվի և մշակույթի համոզեալ: Երրորդ դասարանի ուսուցչուհի Ստելլա Գասպարյանին (հ. 2 դպրոց) դա հաջողվել է: Դասարանի բոլոր աշակերտներն ակտիվորեն մերգովված էին դասապրոցեսում, հաճույքով ընթերցեցին, պատմեցին, գուշակեցին հանելուկներ, պատասխանեցին հարցերին: Ուսուցչուհին ուշադիր հետևում էր նրանցից յուրաքանչյուրի մտքին ու զգացմունքներին: Մեծ ուշադրություն դարձրեց աշակերտների խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, մտածողությանը, նրանց մեջ բարձր բարոյական հատկանիշներ դաստիարակելուն: Ամեն ինչում զգացվում էր ուսուցչուհու վարպետությունը, փորձը և ստեղծագործական

ավելի պատրաստ է, անպայման ինչ-որ դասեր կթաղի:

Ինձ դուր եկավ հատկապես այն, որ ամեն ինչում Արցախի ուսուցիչը հայրենասիրություն է դնում և հոգևոր արժեքներից խոսում: Այդ շեշտադրումն այստեղ ավելի լավ է դրված: Եվ երևանյան իմ հանդիպումներում անպայման կասեմ, որ Արցախում ավելի ճիշտ շեշտադրումներ են անում ուսուցման գործընթացում:

**ՕՐ ԵՐՐՈՐԴ. ՈՒՐԻՇ ԺՈՂՈՎՐԻՍ ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐ ԿԱՐՈՂ Է ԶԱՐԳԵԼ ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱԿԻՈՅ ԱԶԳԸ**

Ռուսական խոսքի երրորդ օրը Հաղորթուն էր՝ Մ. Մանվելյանի անվան հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցում: Երեք թիմերի՝ Մեծ Թաղերի, Ազոխի և Հաղորթի միջնակարգ դպրոցների աշակերտների միջև մրցույթ անցկացվեց ռուս ժողովրդի մշակույթի և ավանդույթների մասին նրանց ունեցած գիտելիքներից: Ընդարձակ դասի լեզվ-լեզուն էր երեք դպրոցների քաջալերող խմբերով՝ տնօրենների գլխավորությամբ: Ներկա էր շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Էդիկ Պետրոսյանը: Ստուգատեսը սկսվեց պետական կարևորության միջոցառումներին հատուկ արարողակարգով. զինվորական քայլերով ներս բերվեց Արցախի դրոշմը, հինգեցին երկու պետությունների՝ ՌԴ և ԼՂՀ պետական օրհներգերը: Մեկ ռոպե լուծությամբ հարգվեց զոհված ազատամարտիկների հիշատակը: Հայ-ռուսական պատմական և մշակութային դարավոր բարեկամական կապերի վկայակոչումով մասնակիցների ողջունեց Հաղորթի միջնակարգ դպրոցի տնօրեն Արթուր Սիմասյանը: Մրցույթը վարող՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Սուսաննա Միրզոյանը ներկայացնում է մրցույթի պահանջները՝ ողջունել խոսք, թիմերի ավագների մրցույթ, ռուսական սովորույթներից մեկի ցուցադրում, չաստուշկաների կատարում, ռուսական հեքիաթի թեմակապացում: Մեկը մյուսից վառ կոլորիտով բեմ են

շիի ազատագրման 20-ամյակին: Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցում համատեղ ուժերով գրական-գեղարվեստական ցուցադրություն ներկայացրին այդ և Մուրացանի անվան ավագ ու խ. Արվյանի անվան հիմնական դպրոցների աշակերտները: Ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, շրջվարչակազմի ղեկավար Քաջիկ Խաչատրյանը, կրթամշակութային օջախների պատասխանատուներ, հասարակության ներկայացուցիչներ: Այստեղ նույնպես միջոցառումն սկսվեց պաշտոնական ներկայացմամբ՝ երկու պետությունների օրհներգերի հնչեցմամբ: Ցերեկույթը գեղեցիկ կատարումներով բացեց երաժշտական դպրոցի փողային նվագախումբը: Այնուհետև երեխաներն ասմունքի և երգի լեզվով ներկայացրին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում հայ ժողովրդի մեծ ավանդը և նոր սերնդի հաղթանակը հայոց Շուշիում: Հատկանշական է, որ նրանք այդ բոլոր ներկայացրին երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, իսկ հայ-ռուսական երաժշտության ներքո «Քոչարին» ուղղակի հետաքրքիր էր մտահղացված:

Այդ օրը մեկ այլ հետաքրքիր միջոցառում էր սպասվում Արցախի պետական համալսարանում՝ ռուս ճանաչված գրող, դրամատուրգ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Կիմ Բակշիի ստեղծագործական երեկոն՝ «Յոթ հռչակագիր սիրո մասին» վերտառությամբ: Հեղինակի ստեղծագործությունները ներկայացրին մայրաքաղաքի հ. 3 միջնակարգ դպրոցի աշակերտները՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Ստելլա Առաքելյանի ղեկավարությամբ: Ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարարը, համալսարանի ղեկավարությունը: Հիվանդության պատճառով թեպետ Կիմ Բակշին ֆիզիկապես ներկա չէր, սակայն հայ ժողովրդի նկատմամբ սիրով լեզուն նրա ստեղծագործությունների ներկայացումը դասի ժամանակ ստեղծել էր նրա մեծ ներկայությունը: Արցախի պետական համալսարանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող հուշանվեր էր պատրաստել Կ. Բակշիի համար, որը նրան կփոխանցվի հայրենիքում:



բա»-ից՝ 10-րդ դասարանում, Լիլիթ Դանիելյանի մոտ (հ. 1 դպրոց): Ուսուցչուհին իր առջև դրել էր մի քանի նպատակ, որոնցից գլխավորն էր սովորեցնել աշակերտներին վերլուծել ծրագրային նյութը: Ու հասավ իր նպատակին: Մեզ համար՝ որպես հաղթանակած պետության, որն ազգային-ազատագրական պայքար է մղել, թեման առավել հրատապ է: Այդ իսկ պատճառով բարենպաստ հող էր ստեղծվել մտքերի ակտիվ քննարկման, խորհրդածությունների և վիճաբանությունների համար: Ըստ էության, դաս-բանավեճ էր: Այդ խնդրից բացի, որ դրել էր դասավանդողն իր առջև, ես առանձնացնում եմ դասի դաստիարակչական կողմը: Գաղտնիք չէ, որ այսօր երկրորդական պլան են մղվել իսկական հոգևոր արժեքները: Այդ առումով ուսուցչուհին մասնագիտական պատասխանատվությամբ կարողացավ չպարտադրող ձևով դասարանին տրամադրել այնպիսի հոգևոր արժեքներ, ինչպիսիք են ազնվությունը, ազատությունը, հայրենիքը, սերը՝ լայն իմաստով: Աշակերտները հստակ էին ձևակերպում իրենց մտքերը, դիրքորոշումը, արտահայտվում էին առանց առոզանության:

**Նունե Առաքելյան, ԱրԴՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու.**

- 9-րդ դասարանում դաս լսեցինք Մարգարիտա Թովմասյանի (հ. 2 դպրոց) մոտ: Թեման Լեռնոստովի «Մծիբին» էր: Հաճելիորեն զարմացրեց դասարանի և ուսուցչուհու միջև ստեղծված շփումը: Զգացվում էր էրուդիցիան: Նա օգտագործեց ուսուցման ժամանակակից մեթոդներ, դիտողական պարագաներ, սլայդներ, ստեղծել էր հեղինակի անկյուն, երեխաներն ընթերցել էին բնագիրը, հետաքրքիր բառարանային աշխատանք կատարվեց: Այդպիսի դաս ընդունված է տեսնել ռուսական դպրոցում: Որպես «մարզիչ»-դասախոս, մի քանի անգամ հանդիպումներ են ունեցել ուսուցչուհու հետ՝ դասին նախապատրաստելու նպատակով, արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել, և այսօր ականատեսն էինք հիանալի արդյունքի:

**Ինգա Հակոբյան, ԱրԴՀ ռուսաց լեզվի և**

մոտեցումը: Նա անցկացրեց դիդակտիկ և մեթոդապես գրագետ դաս: Կարողացավ ավանդական դասը համադրել պրոբլեմային մեթոդների հետ: Աշակերտներին հմտորեն ուղղորդեց խմբային աշխատանքի, ինչն, անշուշտ, բարձրացրեց դասի արդյունավետությունը:

**Լիլյա Բալասանյան, ՀՀ ԿԳՆ ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ.**

- Ես դաս լսեցի 11-րդ դասարանում: Հրաշալի դաս էր: Ուսուցչուհին շատ պատրաստված էր: Դասն առաջ տարավ հետաքրքիր մեթոդներով: Երեխաները բավականին ակտիվ էին: Շատ հաճելի է, երբ ուսուցիչը պատրաստ է կիսել իր փորձը, որն անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ասպարեզ մոր մոտը գործած ուսուցիչների համար: Իսկ ովքեր ներկա էին, և՛ լսում էին, և՛ քննարկում, հարցեր տալիս, հետաքրքիր առաջարկություններ անում: Հաճելի էր տեսնել երեխաների սերը ռուսաց լեզվի նկատմամբ: Նաև տեսա մի դաս Դարաբաղի ավագ դպրոցում, և ու-



րախալի է, որ ավագ դպրոցի առարկայական խնդիրներն ուսուցիչները փորձում են լուծել ինքնուրույն և շատ հետաքրքիր ձևով: Ինձ համար հաճելի էր և այն, որ Արցախի պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսներն ակտիվորեն մասնակցում են, օգնում և կանգնած են ուսուցչի կողքին: Դա շատ դրական փորձ է, պարզապես անհրաժեշտություն: Երբ ուսուցիչը գիտի, որ իր կողքին դասախոս է կանգնած, որը մեթոդապես



բարձրանում թիմերը և իրենց գիտելիքները, դերասանական շնորհքը, կատարողական արվեստը ցուցադրում ռուսական ֆոլկլորից: Տոնական տրամադրությամբ համակված էին բոլորը: Մրցութային հանձնաժողովի համար հեշտ չէր առանձնացնել թիմերից որևէ մեկին, և վերջում արդարացիորեն բոլորին առաջին տեղը տրվեց, որոնք պարզապես լեզվից և ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրերով, իսկ ուսուցիչները՝ հուշանվերներով: Միջոցառման պատասխանատուն Հաղորթի դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Ալլա Առաքելյանն էր, ով 2009թ. ճանաչվել է տարվա լավագույն ուսուցիչ: Բոլոր դպրոցներին Հայաստանում Ռուսահամագործակցության ներկայացուցչության (նախագահ՝ Վ. Կրիվոպուսկով) անունից գրքեր հանձնվեցին:

**ՕՐ ՀՈՐՈՐԴ. ՇՈՒՇԻՆ՝ ՀԱՅՈՑ ՌՈՒՄ ԲԵՐՈՂ**

Շուշիում Ռուսական խոսքի օրերն անցկացվեցին «Պատերազմի ուղիներով» թեմատիկայով՝ նվիրված մեծ հաղթանակների՝ Հայրենական պատերազմում տարած և Շու-

թյան բարձր աստիճանը: Ռուսական խոսքի բոլոր օրերին է.



Շուվաևան և Վ. Կոնոպլովը կարդացին Արցախին ու Հայաստանին նվիրված իրենց բանաստեղծությունները: Վերջինիս խոստովանությամբ՝ Արցախը դարձել է իր երկրորդ հայրենիքը: Արցախում կատարած նրա նկարահանումներին շուտով ակնաստես կլինեն համացանցում: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից նրան հանձնվեց հուշանվեր:

**Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅՈՒՐԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆԱՍՏԵՐԻ ԲԵՐՈՒՄԻՆ

Ռուսական խոսքի օրերը մարտի 30-ին ամփոփվեցին Բաշաթաղի շրջակայքում Բերձորում: Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի դահլիճում գարնանային տոների, Շուշիի ու Լաչինի ազատագրման 20-ամյակի առթիվ «Весна, весна» ուրախ հանդեսը ներկայացրին Բերձորի հ. 1 և հ. 2 միջնակարգ դպրոցների 1-12-րդ դասարանների այն աշակերտները, ովքեր շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ, ռուսաց լեզվի և գրականության տեսուչ Կարինե Մովսեսյանի ղեկավարությամբ ավելի էին հմտացել ռուսաց լեզվում: Դպրոցի մուտքի մոտ աղ ու հացով դիմավորեցին հյուրերին: Մինչև աշակերտ-



ները բեմ կբարձրանային, հյուրերին բարի գալուստ մաղթեց շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը և հուշանվեր ու պատվոգիր հանձնեց գրող Վ. Կոնոպլովին, ով արդեն երկրորդ անգամ է Բերձորում: Կրթության բաժնի առաջատար մասնագետ Կարինե Մովսեսյանը տեղեկացրեց, որ Բերձորից աշակերտները դեռ մարտի 26-ին Ստեփանակերտում մասնակցել են ռուսաց լեզվի ասնունյակի մրցույթին և գրավել 3-րդ տեղը: Այդ առթիվ ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրին են արժանացել նշված կրթականները: Իսկ Բերձորի Վահան Ջախիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Սուրեն Արզանյանը լավագույնը ընթերցանության համար արժանացել է հատուկ մրցանակի: Այստեղ նույնպես Սուրենը սահուն և գեղեցիկ ընթերցանության համար արժանացավ ծափողոցյունների: Միջոցառման ընթացքում բոլոր աշակերտներն էլ ժպտալից և գեղեցիկ պահեր պարզեցին ներկայից: Այնուամենայնիվ, հիմնական շեշտը հայ-ռուսական բարեկամությունն էր: Աշակերտների և խոսքը, և պարը, և երգը, և բեմական խաղը միայն հաճելի պահեր էին առաջացնում: Կարևորվեց հայ ժողովրդի մասնակցությունը Մեծ Հայրենականին: Ներկայացվեց դրվագ հայոց «Քոչարի» պարից, որ հայ զինվորը պարեց և Բեռլինում, և Շուշիում: Աշակերտների ելույթից հետո իրենց կարծիքն ու արտի խոսքը արտահայտեցին հյուրերը:

«Քաշաթաղցիներն, ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես հիացրին, հոգիս ուրախացավ: Այսօր Ռուսական խոսքի փակման օրն է, և հրաշալի վերջակետը դրվեց Բերձորում: Ինձ համար հաճելի է լինել այստեղ, տեսնել այսքան բարի ու արդեն ծանոթ դեմքեր, ըմբռնվել այսպիսի հրաշալի երեխաների խաղը: Հայրենական համար լույսը գալիս է Արցախից և թող այդ լույսն ուրախացնի ողջ աշխարհին», - ասաց Վ. Կոնոպլովը՝ հավելելով, որ անցած տարի խոստացել էր գալ մկերներով և բերել է ռուսական տարագրեր: Ավելացրեց նաև, որ ռուս-հայկական բարեկամությունն ստուգված է դարձրելով ու կշարունակվի հավերժ:

Էլենա Շուվալան ընթերցեց բանաստեղծություն՝ մվիրված հայի աչքերին:

«Սիրելիներս, սիրտս ուրախացավ, որ այսօր ելույթ ունեցան այսքան ուրախ երեխաներ: Դա մեր հայրերի, մայրերի ձեռքբերումն է, որ Արցախի համար այսքան դժվար տարիներին այն լքված չէ», - ասաց Լիլյա Բալասանյանը՝ ավելացնելով, որ հայ ժողովուրդը գիտի անկեղծ բարեկամություն անել, ու քաշաթաղցիներին մաղթեց բարին:

Արցախցի գրող Աշոտ Բեգարյանը կարևորեց Քաշաթաղի շրջանի դերը Արցախի և մայր հայրենիքի համար: «Մեր քաջ տղաների մաքառումների զնով ազատագրեցինք մարդասիրական միջանցքը, որը շրջափակված Արցախը միավորեց Մայր հայրենիքին: Տա Աստված, որ այլևս պատերազմ չտեսնենք»:

